№ 175 ՇԱԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ № 175

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома П. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Օգոստոսի 1-ից
ՏԵՂԱՓՈԽՎԵԼԻ Է
ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ
Սերգիեվսկայա փող. (Սօլօլակ) տուն Ներսիսեան դպրոցի, № 5.

Թիֆլիսի Մանթաշեան առեւտրական դպրոց
(Արմենական բազարի և Կաթոլիչեսկայա փ. անկիւն)
Ընդունելութեան քննութիւնները սեպտեմբերի 2-ին, 3-ին և 4-ին
Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 8 և կէսից մինչև 11-ը:
761. (օ. մ.) առ. 5—1

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Երեխեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի
Տելէֆոն 695
Ն. Գ. ՖԷԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:
Բ. Ա. ՊՈՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոնորդի բի և ակուշջի:
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½, ժ., սիֆիլիս եւ կաժուռ հիւանդութիւններ:
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը:
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:
Բ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Ն. Գ. ԶԻԶԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կոպէկ:
(օ. մ.) առ. 38. 100—73

Դպրոց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Աշակերտների ընդունելութիւնը ԱՌԱՋԻՆ (աղջիկների համար երկրորդ) դասարանն և պատրաստականի բոլոր բաժանմունքները օգոստոսի 27-ից, Բեհբութեան փող. սեփ. տ. № 25.
(օգ.12,16,19,23,25) 775. առ. 5—1

ԿՈՐՑՐԱԾ ՏԱՐԻՆԵՐ

Վարագը, պատմական նշանակութիւն ստացած Վարագը, պատրաստվում է տօնելու հանդիսաւոր յոբելեան այն կուլտուրական գործունէութեան կամ, աւելի ճիշդն ասած, նախաձեռնութեան, որը յայտնվեց այնտեղ 50 տարի սրանից առաջ:

Մենք ասացինք՝ նախաձեռնութեան յոբելեան:

Որովհետև վերջին տասնեակ տարիների դժբաղդ իրականութիւնը այդպէս կարգադրեց իրերը Վասպուրականի և առ հասարակ Թիւրքահայերի երկրում:

Բայց որքան երջանիկ կը լինէր Վասպուրականը, եթէ նա կարողանար տօնել ոչ միայն կուլտուրական նախաձեռնութեան, այլ և անընդհատ գործունէութեան յիսնամեակը:

Վարագի գլխին, ինչպէս և նրա շրջակայ երկրի վրա, այնպիսի չար խաղեր խաղացվեցին, որոնք բացասում էին ամեն մի կուլտուրական գործունէութիւն: Սնվերջ փոթորիկներ և դժբաղդութիւններ քշում հեռացնում էին գործողներին երկրից, մատնելով սկսված ձեռնարկութիւնները քայքայման և անկման:

Թիսուն տարի առաջ սկսված գեղեցիկ գործը մի փոքրիկ բաղդաւոր շրջան ունենալուց յետոյ ենթարկվեց փորձութիւնների, թուլացաւ և ընկաւ, յետոյ նորից յարութիւն առաւ, ապա դարձեալ ընդհատվեց, նորից վերըսկվեց, կրկին դադարեց և վերջ ի վերջոյ կենդանութիւն ստացաւ մի տարի առաջ օսմանեան սահմանադրութեան նախատօնակի օրերում:

Անշուշտ, եթէ մի անգամ սկսված գործը խոչընդոտների չը հանդիպէր և կանոնաւոր զարգացած լինէր, նա այժմ դարձած կը լինէր մի հոյակապ կուլտուրական կոթող, որը լոյս կը սփռէր իր շուրջը:

Իսկ այժմ յոբելեանի համար մենք շատ քիչ բան ունենք առաջ բերելու այն գործունէութիւնից, որ ունեցել է Վարագը 50 տարվայ ընթացքում:

Եւ որ շատ ցաւալի ու կսկծալի է, այդ այն է, որ բացի արտաքին փոթորիկներից և ձախորդութիւններից՝ Վարագը վնասվել է տեղական գործողների թերութիւններից, նրանց հեղգութիւնից, սահմանափակ մտածողութիւնից, ապիկարութիւնից և նոյն իսկ դաւերից ու յանցաւոր գործողութիւններից:

Եւ ահա այսօր մենք տեսնում ենք Վարագը ամենևին առաջ չը գնացած նոյն վիճակից, որի մէջ նա գտնվում էր 50 տարի սրանից առաջ իր կուլտուրական գործունէութեան սկզբում:

Կորցրած տարիներ:

Նրանց յետ բերել մենք չենք կարող:

Բայց կարող ենք սկսել նոր կուլտուրական գործունէութիւն և նրան ընծայել այն գործօն դերը, որը նա կորցրել է անպատշաճ հանգամանքներից:

Այդ կարող ենք անել:

Եւ պէտք է անենք:

Վասպուրականցիները ցանկանում են Վարագը դարձնել մի կրթարան, որը թէ ընդհանուր ուսում մատակարարի այնտեղ սովորող սաներին և թէ նրանց զինի գիւղատնտեսական և արհեստագիտական հիմնաւոր գիտելիքներով, որպէս զի այնտեղից դուրս եկողները, սփռվելով երկրի զանազան մասերում, ընդունակ լինեն օգտաւէտ գործողներ լինել գիւղական ժողովրդի համար և նպաստեն նրա տնտեսական կեանքի բարելաւմանը և մտաւոր առաջադիմութեանը:

Թող յոբելեանի գաղափարը ոգևորի մարդկանց նուիրվելու այդպիսի մի արդիւնարար գործի սկզբնաւորութեան: Եւ թող ներկայ երիտասարդութիւնը 50 տարիներ անցնելուց յետոյ՝ գտնէ այժմ բեղմնաւորի այն գործը, որ սկսվել է այնքան փայլուն և գեղեցիկ յոյսերով:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 10 օգոստոսի

Սև քաղաքում Բրլսկու նաւթահորում մի անյայտ մարդ ռումբ նետեց նաւթապահեստի վրա, որի մէջ կար 200,000 պուդ նաւթ: Մի կողքը ծակվեց, որից սկսեց նաւթ հոսել, սակայն քիչ քանակութեամբ: Հրդեհ չառաջացաւ: Շարագործութիւնը կապում են Բրլսկու որդու յափշտակութեան գործի հետ: (Հ. Գ.)

Կրեմէնչուգ, 10 օգոստոսի

Երէկվանից սկսվել է ուժեղ հրդեհ, որին ճարակ դարձան երկու սղոցագործարաններ, տաս մեծ փայտի պահեստներ: Այրվեցին երեք մերձակայ թաղամասերը: Առանց ապրուստի մնացին մօտ 1000 ընտանիքներ: Վնասները 300,000 ռուբլուց անցնում են: Հրդեհի տեղը մեկնեց նահանգապետը: Պոլտավայից ուղարկված է հրդեհաշէջների մի մասը: (Հ. Գ.)

Ժընէվ, 10 օգոստոսի

Կէսօրից յետոյ քաղաքային գազային գործարանում առաջացաւ անսովոր ուժեղ պայթում: Մի կիսամեռ տարածութեան վրա բոլոր պատուհանների ապակիները ջարդուփշուր եղան: Մինչև ցերեկվայ ժամը 5-ը հանեցին 2 սպանվածների. վիրաւորվածների թիւը շատ մեծ է: Գործարանը կրակի սէջն է: (Հ. Գ.)

Աթէնք, 10 օգոստոսի

Գէորգ թագաւորի ադիւտանտը դիմեց միսիստր-նախագահ Բալլիին մի նամակով, որով խնդրում է հերքել այն լուրը, որ իբր Գէորգ թագաւորը գահից հրաժարվելու է գօրքերի մէջ երևացած շարժման պատճառով:

Հասարակական կարծիքը հաշտվեց այն հանգամանքի հետ, որ թիւրք-յունական միջադէպը դիմում է բարեյաջող վախճանի: (Հ. Գ.)

Վիէննա, 10 օգոստոսի

Սոֆիայից հեռագրում են «Կօր. Բիւրօյին». «Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Դիգիրչեվի մօտերն օգոստոսի 7-ին թիւրքաց զօրքերը յարձակվել են բոլգարական Բէլիկամէկ սահմանային պահակախմբի վրա: Մի քանի ժամ շարունակված հրացանաձգութեան մէջ, որի ժամանակ 2 կողմերն էլ ստացել են ամրութիւններ, սպանվել են մի քանի թիւրք զինուորներ»: (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 10 օգոստոսի

Արտաքին գործերի մինիստրը խընդրեց իրան այցելութեան եկած հովանաւորող պետութիւնների դեսպաններին բանակցութիւնների ձեռնարկել կրէտական աւտօնոմիայի մասին:

Առանձնապէս Բ. Դրանը հոգս է պատճառում այն հանգամանքը, որ դատական գործերը կրէտական դատարաններից յանձնվում են Եթէնքի վճռաբեկ դատարանի քննութեանը և պօստում գործադրվում են յունական նամակագրոշմներ: (Հ. Գ.)

Վարշավա, 10 օգոստոսի

Անցեալ շաբաթվայ ընթացքում քարհատները յայտարարեցին մասնաւոր գործադուլ, պահանջելով սահմանել ութժամեայ բանուորական օր, փոխարէն ինն ժամի: Այսօր աշխատանքները դադարեցրին Վարշավայի բոլոր քարհատները: Բանակցութիւնները տէրերի հետ ընթանում են խաղաղ:

(«Հ. Գ.»)

Այն հերքումը, որ Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը տուեց նեղուցների հարցի առիթով, մեծ հաճութեամբ է մեկնաբանվում թիւրք լրագիրների կողմից, որոնք Ռուսաստանի հացէին բարեկամական արտայայտութիւններով են խօսում: «Սաբահ» և «Թանին» յայտնում են, որ իրանք համոզված էին արդէն այդ բանի մէջ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 10 օգոստոսի

Շահի տասամեայ եղբայրը պրինց Մահմէդ-Հասան Միրզան պալատի մինիստրի ձեռքով Զէրգէնդէից բերվեց Թէհրան, ուր հոշակվեց գահաժառանգ: (Հ. Գ.)

Թէհրան, 10 օգոստոսի

Տեղեկութիւն ստացվեց, որ աւազակներից գերված պարսից պետական բանկի վերատեսուչ Բայտը ազատ է արձակվել և թոյլատրութիւն է ստացել ճանապարհորդութիւնը շարունակել:

Շահին քաղաքական գիտութիւններ աւանդելու համար հրաւիրվեց Հաջի Էնխար, Լազարեան ճեմարանում պարսից լեզուի դասատու Միրզա Ջաֆարի եղբայրը: Դաստիարակ Սմիրնովին առաջարկված է ժամանակաւորապէս պարապմունքները դադարեցնել: (Հ. Գ.)

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՇՎԷԴԻԱՅՈՒՄ

Երկու բանակներումն ևս լուրջ նախապատրաստական աշխատանք է կատարվում ընդհանուր գործադուլի ապագայ երրորդ շաբաթվայ համար: Որպէս արդէն յայտնի է ընթերցողներին, 15-ից մինչև 20 հազար գիւղատնտեսական բանուորներ կը մասնակցեն կռուին երկուշաբթիից, օգոստոսի 3-ին: Սակայն ամենանշանաւոր հարցը բանուորների համար այն է, թէ արդեօք գործադուլին կը մասնակցեն երկաթուղիական բոլոր ծառայողները: Բանն այն է, որ «երկաթուղական ծառայողների դաշնակցութիւնը» ընդհանուր ձայնատուութեան է ենթարկել այդ հարցը, որի հետևանքները կը յայտարարվեն օգոստոսի 2-ի երեկոյեան:

Ինչ վերաբերում է «շվէդական գործատէրերի դաշնակցութեանը», նա խնդրում է Բերլինի բանկերին՝ աջակցել իրան լօկաուտը շարունակելու համար: Լուրերի համեմատ, գերմանական բանկերի խորհուրդը, ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ կուսի ելքը Շվէդիայում միջազգային բնաւորութիւն ունի, իբր թէ խոստացել է 10 միլիոն կրոն փոխատուութիւն (5½ միլիոն ռուբլի): Սակայն այն էլ պէտք է ասել, որ գործատէրերի դաշնակցութեան մէջ ևս սկսվում են լսվել ձայներ, մանաւանդ փոքր գործարանատէրերի և արդիւնաբերողների կողմից, թէ պէտք է զիջումներ անել:

ՌՈՒՍԱՑ ԶՕՐՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Խօսելով ռուսական զօրաբաժնի Պարսկաստանից յետ կանչելու լուրի մասին, «Русск. Вѣд.» լրագիրը ասում է հետևեալը.

«Անհիմն են դուրս գալիս այն լուրերը, որ կառավարութիւնը որոշել է յետ կանչել ռուս զօրքերը Ղազվինից օգոստոսի 15-ին: Ընդհակառակն, հաղորդված լուրերի համեմատ, կառավարութիւնը որոշել է թողնել նրանց Ղազվինում, մինչև որ կատարելապէս վերականգնի հանգստութիւնը Պարսկաստանում:

«Դժուար է հասկանալ, թէ ինչով է պատճառաբանվում այդ որոշումը: Երբ ռուսաց զօրքերը մտնում էին Պարսկաստան, կառավարութիւնը առանձնապէս շեշտում էր, որ մեր զօրաբաժնի միակ նպատակն է պաշտպանել Պարսկաստանում ապրող օտարազգիների և մանաւանդ ռուսների շահերը: Պարսկաստանի դէպքերի ընթացքը ցոյց տուեց, որ այնտեղ տեղի ունեցած յեղափոխութիւնը—շահերի փոփոխութիւնը—ամենևին չը դիպաւ օտարազգիների շահերին: Այժմ ևս նոյնպէս ոչ մի վտանգ չէ սպառնում եւրոպացիներին Պարսկաստանում: Հետևապէս՝ ռուսաց զօրաբաժնի մնալը Պարսկաստանում անհրաժեշտութեան հետևանք չէ, և հասկանալի է, թէ ինչու զօրաբաժնի Ռուսաստան վերադառնալու լուրերը տարածվեցին: Սակայն այդ լուրերի հերքումից երևում է, որ զօրքերը կը մնան Սարպատականում:

Եթէ այդ յիրաւի այդպէս է, պէտք է կարծել, որ առհասարակ խօսք չէ կարող լինել մերձաւոր ապագայում ռուսաց զօրքերի հեռանալու մասին Պարսկաստանից: Պարսկաստանը ներքին յուզմունքների շատ լուրջ շրջանում է: Այդպիսի շրջաններ ամեն տեղ շատ երկար են տևում, և աւելի ևս երկար է տևելու Պարսկաստանի նման մի երկրում, ուր կանոնաւոր պետական իշխանութիւն առհասարակ գոյութիւն չունի և ուր խաղաղ ժամանակն ևս իսկապէս անիշխանութիւն է տիրում և կայսրութեան առանձին մասերը կատարելապէս անկախ են միմեանցից: Շատ երկար պէտք է սպասել, որ կատարելապէս հանգստութիւն վերականգնվի այդպիսի պետութեան մէջ, որովհետև անկասկած է, որ դրա համար դեռ շատ տասնամեակներ են հարկաւոր: Հետևաբար, թողնելով զօրաբաժինը Ղազվինում և սպասելով կատարեալ խաղաղութեան վերականգնման վայրկեանին, Ռուսաստանը իրաւապէս իր վրա է վերցնում իր զօրքերը Սարպատականում շատ երկար ժամանակով պահելու և պարսկական ներքին գործերում միջամտելու պարտաւորութիւնը մինչև անգամ այն դէպքերում, երբ նրանք ոչնչով չեն շօշափում եւրոպացիների շահերը: Ռուսական զօրքերի մնալը Պարսկաստանում այդպիսով շատ լուրջ հետևանքներ կարող է ունենալ»:

ՊՕԼՍԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 26 յուլիս

Պապիկեանի համար տակաւին կը շարունակուին համակրական գրուածքներ տեղական մամուլին մէջ. իր կեանքի մանրամասնութեան վրայ կը խօսուի թիւրք թերթերու մէջ: Իր կեանքը թիւրքերու աւելի ծանօթ եղած է, քան թէ հայերու, որովհետև թէ իբրև դատական պաշտօնեայ և թէ իբրև փաստաբան՝ շփում ունեցած է միշտ թիւրքերու հետ: Իր բարեկամները ալ աւելի թիւրքերը եղած են: Բայց զանազանուիլն պէտք է դնել իր ունեցած թիւրք բարեկամներուն մէջ: Ինչպէս հետզհետէ կը տեսնուի, Պապիկեան թիւրքերէն իրեն բարեկամ ընտրած է զանոնք, որ երկրին մտաւորականութեան մէջ իրենց սեպհական դիրը ունեցան և ունին այսօր: Իրեն մտերիմներէն առաջինն էր Մանիսա-Զադէ Թէվֆիկ բէյ, ան, որ կը պատկանէր երիտասարդ-թիւրքերու կուսակցութեան և որ մեռաւ կարճատև հիւանդութենով դատական մինիստրութեան պաշտօնի մէջ: Եբեսփոխան ընտրուեցաւ օսմ. կոմիտէի ջանքերովը, միևնոյն ատեն իբրև անդամ կոմիտէի:

Մեր կեանքի վերջին շրջանի մէջ, մինչև սահմանադրութիւն, թիւրքերու սիրելի ըլլալ, անոնց վստահութիւնը գրաւել ուրիշ բան չէր, եթէ ոչ լրտեսութիւն ընել այս կամ այն ձևով. շատ քիչերու տրուած էր կարենալ շրջանի ընտրութիւն ընել և համակրելի ըլլալ լոկ անձնական յատկութիւններով և ինքնայատուկ գաղափարներով: Այդ վերջիններէն եղած է, ինչպէս կերևի, Պապիկեան: Աղանայի դէպքերէն առաջ, ճանչցուած էր երեսփան մը, թիւրք մտածումներէ առաջնորդուած, ու տեսակ մը կրաւոր գործիք: Հաւիւ թէ քանի մը բարեկամներ առիթ ունեցած էին տեսնել այդ երեսփոխանի մէջ թագուն հայը, կամ թէ, ինչ որ աւելի ճիշդն է, ճշմարիտ հայրենասէրը, արդարադատ օսմանցի, լայն մտածումներով, լայն հայեացքներով:

Իր որբերու մասին լաւագոյն անօրինութիւններ եղան. կառավարութիւնը որոշած է ապրուստի միջոցներ հայթայթել անոնց. իր արու զաւակը, կոմիտէի որոշումով, պիտը կրթուի լիսեին մէջ և, ժամանակ մը եաքը, ինչպէս որ փափագած է իր հօրը ողջութեանը ատեն, պիտի տրուի զինուորական բարձրագոյն վարժարանը: Պատրիարքարանն անոր 12 և 15 տարեկան աղջիկները պիտի դնէ գիշերօթիկ վարժարաններ և այժմէն որոշումներ տուած է. իսկ 18 տարեկան աղջիկանը պիտէ յատկացուի դրամօժիտ մը: Հաւանական է, որ պարլամենտ

տի նախագահը ստանձնէ այդ պարտակա-նութիւնը։

Թիւրքական այս համակրանքը, որով շրջապատուեցաւ Պապիկեանի յիշատակն ու կը շրջապատուին իր որբերը, պիտի փոր-ձէին զիս քիչ մը թիւրքասէր ըլլալ, եթէ պարագայ մը չվարանեցնէր զիս, ու այդ համակրանքը պիտի ցոյց տրուէր, եթէ, Ադանայի թուղթերը ձեռքը բռնած, ճշմար-տութիւնն ու արդարադատութիւնը անոր-քարար շրջունքներու վրայ, պարլամենտէն ներս մտնէր Պապիկեան։ Անհաւատիկ հարցը։ Եւ որովհետև մէջ տրամադրուեցանք յոռե-տես ըլլալ, և գուցէ այսպէս ճնալ շարունա-կենք մինչև որ անկեղծութեան դրական հաւատաքներ մեզ նոր համոզումներու բե-բեն, կը կարծենք թէ պարլամենտը շատ հաճելի չպիտի գտնէր Պապիկեանի արդա-րադատութիւնն և ճշմարտութիւնը, և գու-ցէ իր թիւրք բնակիչները յորդորուէին ըսելու, թէ «մինչա վերապահ ըլլալ պէտք է հայերու բարեկամութեանը մասին. կու-գայ օր մը, ուր անոր մէջ կը գտնես դար-ձեալ հայը»։

Տար համոզումի համար ունինք Ադանայի հարցը, որ այսօր նոյնացած է, իր վերջին ձեւովը, Պապիկեանի, կամ անոր յիշատա-կին հետ։ Իր թուղթերը, գրուած իր վեր-ջին շունչին տակ, կը մնան իրմէ եռքը իբրև վաւերաթուղթեր իր քննութեանցն ու տեսութեանցը։ Ասոնք այսօր կրնան խօսիլ Պապիկեանի փոխարէն։ Պարլամենտի պարոն նախագահը քիչ մնաց որ անպէտ հռչակէր զանոնք, արդէն հերքեց անոնց կարևորութիւնը, և սակայն, բարեբաղդա-բար, օգնութեան հասան ուրիշ երեսփոխան-ներ, որոնք պնդեցին թուղթերուն կարևո-րութեանը մասին և անկեղծութեան աւելի մեծ հաւատիքներ տուին։

Թերևս քանի մը օրէն այդ Պապիկեանի թուղթերը պատիւ ունենան խօսելու Ադա-նայի մասին, ու մենք ալ առիթ ունենանք տեսնելու պարլամենտի դատումի, արդա-րադատութեան ըմբռնումի դրական հաւաս-տիքը։ Եթէ այդ թուղթերը իբրև լոկ ձե-ւականութիւն (formalité) պիտի կարդա-ցուին՝ դէն գցելու համար, անգամ մըն ալ միջոց կունենանք տեսնելու, թիւրքական համակրանքին տակ, կոկորդիլոսի ար-ցունքներ։

Ֆէրիդ փաշա, ներքին գործերու մի-նիստրը, հրաժարական տուաւ։ Կարծեմ թէ պէտք է անդառնալի ըլլայ, որովհետև ստիպուած քաշուեցաւ իր պաշտօնէն. և դա-լիմն ալ չպիտի համարձակի ջնջալ, որ եւ տնէ իր տուած հրաժարականը։

Ֆէրիդ փաշա, համիդեան շրջանի վերջին եպարքոս, սահմանադրութեան առեն դուրս նետուեցաւ բարձրագոյն պաշտօնատարու-թենէ։ Թոյլ և վարանկոտ Հակը բէյէ եռքը՝ կոչուեցաւ ներքին գործերու մի-նիստրութեան, սա յոյսերով թէ, իբրև ալ-բանացի, իբրև Աթէնքի համալսարանական, կրնայ գործել իբրև նոր մարդ նոր պայ-մաններու մէջ։ Ինքն ալ մեծ խոստումնե-րով եկաւ։ Ամենքս ալ յոյսեր ունեցանք։ Ամիսներ անցան, ու ոչինչ ըրաւ։ Վերջին օրերս, Եըլդիզ լրտեսական թուղթերու մէջ գտնուեցաւ իր մէկ «ժուրնալը»։ Ան կը բաւէր, որ կծու քննադատութիւն մը սկսէր իր մասին. ամենքէն առաջ սկսաւ «Թա-նինը» իր յարձակումները։ Ֆէրիդ փաշա քանի մը օր հատատ կեցաւ իր զիրքին վրայ։ Իր «ժուրնալը» թարգմանուեցաւ տե-ղական բոլոր թերթերուն մէջ։ Ա՛լ երես չմնաց իրեն. չկրցաւ բերանը բանալ՝ բառ մը իսկ արտասանելու. և հրաժարեցաւ։ Հիմա մտադիր է քաշուիլ իր հայրենիքը, Աւլոնիա, ուր պիտի քաւէ իր «ժուրնալի» մեղքերը։

Թալաթ բէյի հեռագրուեցաւ, որ փու-թացնէ իր դարձը Եւրոպայէն՝ ներքին գոր-ծերու մինիստրութեան պաշտօնը ստանձ-նելու համար։ Թալաթ բէյ պարլամենտի Բ. նախագահն է և ամենէն աւելի ազատա-միտ երեսփոխանը խորհրդարանին մէջ։ Իր այդ ընտրութեանը մասին նախապէս շատ խօսուած է պարլամենտական շրջանակնե-րու մէջ։ Ու հիմա որ Եւրոպայէ կը դառ-նայ, հաւանաբար իրեն հետ կը բերէ նոր տպաւորութիւններ։

Հիլմի փաշան ալ շատ հաստատուն չե-բեւեր իր պաշտօնի մէջ։ Կոմիտէն մասամբ միայն կուգէ առայժմ կանգուն պահել զանի։ Իր ունեցած վարանումը գլխաւորա-բար լաւագոյն յաջողդ մը չկարենալ դիւ-բաւ գտնելուն մէջ կը կայանայ։ Կը խօ-սուի Շէվքէթ փաշայի ու Բեամիլ փաշայի մասին։ Շէվքէթ փաշա, իբրև լաւ զինուո-րական, գուցէ չունենայ վարչապետի ան-հրաժեշտ տաղանդը, ու այն առեն կը կորսնցնէ անշուշտ իր բարոյական վարկը։ Բեամիլ փաշան է ամենէն արժանաւորը։ Կոմիտէն առաջարկած է, որ մեր ծերունի քաղաքագէտը անպայման ընդունի իր քա-ղաքական ծրագիրը։ Անհասիկ դժուարու-թիւնը, կամ դժբաղդութիւնը։ Ներելի է կարծել, թէ Բեամիլ փաշա, ան՝ որ ունե-ցած է իր քաղաքագիտական առանձին հա-յեցքները, իր սեփական քաղաքականու-թիւնը ու ըստ այմմ շինած է իր տեսու-թիւնները՝ այսօր, ամեն հայեցք թողած, կրաւորաբար համակերպի ծրագրի մը ուղ-ղութեանը և յանձն առնէ վարչապետու-թիւնը։

Այնու ամենայնիւ պէտք է խոստովանիլ, թէ այսօր Բեամիլ փաշա յաղթանակը տա-րած է. կոմիտէն ըմբռնեց, թէ երկրին մէջ միակ մարդն է, որ արժանաւորապէս կը վայելէ քաղաքագէտի, վարչական մարդու համբաւը։

Եղաւ ժամանակ մը, ուր կոյր ոսոխներ, հիլմիական վարչութեան կոյր պաշտողներ, ուղղեցին ցեխոտել ծերունի քաղաքագէտը, ուզեցին գտնել կասկածելի թուղթեր, բայց Բեամիլ փաշա, առանց ժամանակ անցնե-լու, տուաւ հրապարակային պատասխան-ները, և մութին մէջ մեքենայող ոսոխնե-րուն intrigues-ները նշաւակուեցան խայ-տառակօրէն։

Երկրին շահը կը պահանջէ, որ կոմիտէն լուսցնելով ամեն տեսակ թոյլ կիրքերը՝ ջա-նայ վարչութեան գլուխ բերել Բեամիլ փա-շան։ Ան է ճշմարիտ հայրենասիրութիւնը։

Քանի մը օրէն Պօլիս կը դառնան «Իկ-դամի» արտօնատէր՝ Զէդվէդ բէյ, Իսմայիլ Բէմալ բէյ, որոնք ապրիլի սկիզբները, կռուական շարժումներու առեն, արտասահ-ման խոյս տուին։ Այդ փախուստը, յետոյ, իրաւունք տուաւ չարամիտներու՝ յետադի-մական փոմակներու մէջ խառնել զա-նոնք։ Կոմիտէն ալ նոյն կասկածներն ու-նեցաւ։ Բայց ժամանակը ցոյց տուաւ, թէ ազատական կուսակցութեան այդ մարդիկը ոչինչ ունեցած էին։ Քիչ մնաց, որ նոյնիսկ Բեամիլ փաշա իբրև վանգաւոր տարը աբ-սորի դատապարտուէր. զինուորական հսկո-ղութեան ներքև դրուեցաւ իր տունը, ամեն յարաբերութիւն արգիլուեցաւ։ Այս մասին արդէն գրած եմ ժամանակին։ «Մշակի» թղթակիցը բարեբաղդ է, որ կիրքերու շփոթին մէջ, մեքենայութեանց լարուած առեն, կրցած էր պաշտպանել հալածուած ճշմարտութիւնը, որ այսօր երևան կուգայ։

«Մշակի» թղթակիցը, ինչպէս ուրիշ ա-սիթներու մէջ պատիւ ունեցած է հրապա-րակաւ գրելու, այսօր ալ այն համոզումը ունի, թէ Բեամիլ փաշա միակ մարդն է, որ Թիւրքիոյ վարչութեան մէջ կրնայ ունենալ փրկարար դեր։ Մաղթելի է, որ կոմիտէն, դէն գցած ամեն տեսակ հայեցքներ, լոկ լայն հայրենասիրութիւնով մը յաջողի վարչութեան գլուխ անցնել ծերունին։

Երուսաղէմի տեղակալին մազբաթան, ազգ. ժողովի անդամներէն ստորագրուած, մատուցուեցաւ Բ. Դրանը։ Տեղապահը յանձն-առած է յարգել ազգին կամքը, և քանի մը օրէն Պօլիս պիտի գայ լսելու վարչութեան այն պայմաններու մասին, որոնց համեմատ պիտի գործէ Երուսաղէմի մէջ։

Ղևոնդ-Երէցեան մեծ խայտառակութիւն մը հրապարակի վրայ։ Հրապարակուեցաւ Ղևոնդ վարդապետի վերջին նամակներէն մին։ Շնորհուանակ վարդապետը, իր այդ երկայն նամակին մէջ, մանրամասնօրէն կը թուէ թէ որոնք են այն երեսփոխանները, որ նուիրուած են իր դատին պաշտպանու-թեանը. թէ ո՞ր թերթն է, որ յանձն առած է, իրեն միջոցներովը, փաստաբանօրէն ջատագով հանդիսանալ իրենց, և թէ ո՞ր թերթն է, որ նոր խոստում ըրած է օգնու-թեան հասնելու իրենց կուսակցութեանը դրամական օժանդակութեան շնորհիւ։ Ղե-ւոնդ վարդապետ, իր կուսակցութեան մէջ, կամ անոր պաշտպան թերթերուն մէջ համ-բաւուած էր շատ խելացի, հեռատես, յաջող մարդ մը։ Ու այսօր այդ մարդը, իր գաղա-նի համբաներով զրկուած նամակովը, հրա-պարակի վրայ է խայտառակօրէն։ Նա-մակը ձեռք անցուած է շատ աւելի լաւ վարպետորդիներու ձեռքովը, որոնք զինքը այսօր հանրութեանը առջև կը դնեն ջուրի մէջ թաթխուած հաւի մը պէս։

Հիմա կը սպասենք տեսնել, թէ ինչ պի-տի ըսեն այն երեսփոխանները, որոնք Ղևոնդ վարդապետի նամակին մէջ հրապարակուած են իր դատին, իր շահերուն պաշտպանները։ Ի՞նչ պիտի ըսէ ինքը Ղևոնդը, որ Պօլիս նստած՝ Երուսաղէմի մէջ կը խաղցնէ իր մեքենայութեանց լարերը։

Ադանայի նոր կուսակալ ընտրուեցաւ Զէմալ-բէյ, զինուորական պաշտօնեայ մը։ Զէմալ-բէյ, Իւսկիւտարի կառավարիչ, կո-միտէական, ճանչցուած է իբրև անկեղծ գործիչ, ազատական, հայրենասէր։ Դաւլիճը զանի այդ պաշտօնին կոչեց՝ նկատի առնե-լով հայերու համակրանքը դէպի Զէմալ բէյ։ Պարիսիրքը համակրանքով խօսած է վարչա-պետին Զէմալ-բէյի մասին։ Զէմալ-բէյ պատ-բիարքարան գացած է շնորհակալութիւն յայտնելու։ Հաղիւ դուրս ելած, իրեն հա-ղորդուած է, որ Ադանայի կուսակալ ընտ-րուած է։

Նախորդ կուսակալը պաշտօնէ դադրեցաւ պարիարքի առաջարկութեանը վրայ։

Շահէն

Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԱՄԱԿ ՀԱՆԳ. ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ

Կ. Պօլսի հայոց պատրիարք Եղիշէ արքեպ. Դուրեան յուլիսի 17-ից հետևեալ գրութիւնն է ուղղել Հանգանակիչ Մասնա-ժողովին յանուն Մասնաժողովի անդամ-գանձապահ Ա. Յարութիւնեանի.

«Ամենամեծ ուրախութեամբ իմացանք, որ պատ. Մասնաժողովդ՝ լսելով Ադանայի խժդուժ աղէտը՝ ձեռնարկեր է շարունակե-լու ասկէ առաջ Հայաստանի սովելոց համար իր բացած հանգանակութիւնը։

«Հէ կարելի բառերով նկարագրել և թուել սոսկալի աւերը, որ քարուքանդ դարձուց Կիլիկիոյ արգաւանդ և գեղեցիկ աշխարհը, զրկելով հազարաւոր ժողովուրդ ոչ միայն իր սիրելիներէն, այլ և իր տունէն, գոյքէն, եկեղեցիէն, ապրուստէն և ամեն պէտքե-րէն։ Ցուսահատութիւնը համատարած է, և չարիքն ու աղէտին հետևանքներն անդար-մանելի են։ Ազգն իր միջոցներով գարմանը կը փնտռէ, թէպետ նելու զէթ ժողովրդեան նիւթական անհաշուելի վնասները և զբա-ղութիւնները, և այս գործի պիտի լի-նի միայն ձեռնտուութիւններովը՝ ձեր նման բարեգործ մարմիններու։ Անտրիկան հո-գածութեան կարօտ են հազարաւոր որբեր, որք օտարներէ կը խլուին հետզհետէ, և գայնս ամփոփել անհրաժեշտ է։ Կը գտնուին բազմաթիւ այրիներ, որք գործելու դիւրու-թիւն չունին և անոնց դրամագլուխ և գործ իր զաւակ և այժմ անբաժան ընկեր ժողո-վրդական դպրոցը։ Դէպի ձախ դուք տես-նում էք այն շրջանաւորը, որոնք հաղոր-դակցութիւն են պահում լի գանգան կող-մերի մէջ։ Շվէդացիները գիտեն օգտվել իրանց երկրի գետերից, լճերից, լեռներից և անտառներից։

Դալարնէ Շվեդիայի ամենահետաքրքրա-կան մասն է մի քանի պատճառներով, և հարիւրաւոր տուրիստներ թափառում են այդ նահանգում ամեն ուղղութեամբ։ Նախ՝ այդ-տեղ է շվէդացին ամենից աւելի պահպանել իր հնադարեան գաւառաբարբառը և այդտեղ համարեա ամեն մի գիւղ իր առանձին առ-գանութիւնն ունի, բայց ընդհանուր առ-մամբ բոլորն էլ կրում են ֆինլանդական առոգանութեան հետքերը, որ ցոյց է տա-լիս, թէ որքան մեծ է եղել գաղթականա-կան հոսանքը Ֆինլանդիայից դէպի այս նահանգը։

Երկրորդ՝ այստեղ է ժողովուրդն ամենից աւելի լաւ պահպանել գեղեցիկ, գոյնզգոյն գաւառական զգեստը, որը բոլորովին նման չէ քաղաքակիրթ ազգերի մէջ ընդունված զգեստներին, այլ աւելի աչքի է ընկնում իր ուրախ գոյներով։

Երրորդ՝ այստեղ գտնվում են մեծամեծ հանքեր ու գործարաններ, որոնցից մի քա-նիսը գոյութիւն են ունեցել հարիւրաւոր տարիներ և համաշխարհային հռչակ են վա-յելում։

Չորրորդ՝ որովհետև Դալարնէն Շվեդիայի ազատագրութեան մէջ շատ մեծ դեր է կա-տարել թէ իր հարստութեամբ և թէ իր հայթայթել՝ ապրելու համար՝ պայման է։ Կան բազմաթիւ արկածեալ հիւանդներ, ան-կարներ և ծերունիներ, որոնց նպատակ ստիպողական է։ Ասոնցմէ դուրս շատ մը եկե-ղեցիներ ու դպրոցներ, տուներ ու վաճա-ռատուներ հրկիզուած են, զորս մասամբ վերանորոգել անհրաժեշտ գտնած է։ Այս պէտքերէն որուն որ պատ. Մասնաժողովդ ուզէ սատարել՝ մեծագոյն բարեգործու-թիւնն ըրած պիտի լինի։

«Ուսում գնահատելով ձեր մարդասիրա-կան ձեռնարկին վերսկսումը, կը խնդրենք, որ Մասնաժողովդ հաճի անմիջապէս մղում տալ իր աշխատութեան և փութով հասցնել իր օգնութիւնները՝ ուղղակի պատրիարքա-րանս, որ նպատակին ալ սահմանեալ լինի, գէթ մասամբ գոհացում տալու համար ստի-պողական պահանջներուն։

«Կը խնդրենք նաև տեղեկութիւն հաղոր-դել մեզ, թէ այս աղէտեալներու համար պատ. Մասնաժողովդ ցարդ ի՞նչքան դրամ ղրկած է, երբ և ի՞նչ միջոցաւ, որպէսզի կարելի լինի մեզ ձեռք բերել նոյն դու-մարները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

«Հայ ինտելիգենցիան անտարբեր է դէպի իր ժողովրդի վիճակը, նրա ցաւերը և աղէտները»—ահա մի յանդիմանութիւն, որ նորերս Բագու քաղաքի հասարակական հայ գործիչներից մինը Ա. Վաչեանցը, խփել է հայ ինտելիգենցիայի երեսին, յանդիմա-նութիւն, որի առիթով և ծագել է բանա-կռիւ «Բակու» թերթի մէջ։

Հայ ինտելիգենցիային պատկանող մի քանի անձինք՝ բժ. Մ. Զալիեանց, Կարա-Մուրզա և այլք հանդէս եկան իբրև պաշտ-պան այդ ինտելիգենցիայի՝ Վաչեանցի մե-ղադրանքի դէմ։

Արդեօք Ա. Վաչեանց անմտածված և թի-թեւ քայլ արաւ, շպրտելով հայ ինտելիգեն-ցիայի երեսին այդպիսի մի ծանր մեղա-դրանք, թէ՞ նրա քայլն արդիւնք էր փոր-ձառութեան, կշռված և լաւ մտածված ու հիմնաւորապէս պատճառաբանված։ Չէ՞ որ ինքն Ա. Վաչեանը ևս պատկանում է այն ինտելիգենցիային, որին մեղադրում է անտարբերութեան մէջ դէպի հայ ժողովրդի վիճակը, կարիքները և աղէտները։

Արդարև՝ ծանր մեղադրանք։ Ճանա-չելով Ա. Վաչեանցին, մենք չենք կարող ընդունել, որ նրա մեղադրանքը լեզուից թռած մի բան է (lapsus linguae)։

Դժբաղդաբար ես ձեռքի տակ չունեմ տոչ. Մ. Զալիեանցի սաստկանոցական յօ-դուածը։ բայց նրա իմաստը յամենայն դէպս՝ այն է, որ նա անարդար է գտնում Վաչեանցի մեղադրանքը։

Սակայն իմ առաջ է Պօղոս Կարա-Մուրզայի յօդուածը, որ տքնում է նոյնպէս արդարացնել հայ ինտելիգենցիան, բայց արդարացնում է բաւական օրիգինալ ձևով, մի ձևով, որ չէ կարող դիմանալ լուրջ քննադատութեան։

Այդ օրիգինալ դատողութիւնը հետևեալ կերպով է ձևակերպված. հայ ինտելիգեն-ցիայի օրոշ և մեծաքանակ մասը չէ կարե-լի բոլորովին պատասխանատու համարել հասարակական տեսակէտից, քանի որ նա չէ հետաքրքրվում հասարակական ոչ մի գործով։ Ուրեմն, ըստ Կարա Մուրզայի, որևէ մի անձի անտարբերութիւնը դէպի հասարակութեան շահերը այնպիսի մի հիմք է, որ բաւական է ազատելու նրան պատաս-խանատուութիւնից հասարակութեան դա-տաստանի առաջ։ Կը նշանակէ, եթէ, օրի-նակ, ես, մի հայ ինտելիգենտ, բոլորովին անտարբեր եմ դէպի իմ ժողովրդի բաղդը, կարիքները, աղէտները, ինձ չէ կարելի յանդիմանել, որովհետև հէնց իմ անտար-բերութեան շնորհիւ ոչ ոք իրաւունք չունի ինձ մեղադրել։ Բայց չէ՞ որ, ինչպէս շատ ճիշդ կերպով նկատում է «Բակու» թերթը, հէնց այդ անտարբերութիւնը կազմում է հայ ինտելիգենցիայի գլխաւոր մեղքը։ Եւ Ա. Վաչեանցը, մեղադրելով հայ ինտելի-գենցիան անտարբերութեան մէջ, ուրիշ նպատակ չէ ունեցել, եթէ ոչ շեշտել նրա այդ բնորոշ գիծը։

Մի այլ առարկութիւն, որ անում են Կա-րա-Մուրզան և բժշկապետ Մ. Զալիեանցը, աւելի ևս տարօրինակ է թւում մեզ։

Վաչեանցը մեղադրում է հայ ինտելի-գենցիան գլխաւորապէս Ադանայի դէպքի առիթով։ Նը նայելով որ այդ երկրի հայե-րի կրած աղէտը սոսկալի է, բայց հայ ին-տելիգենցիան մեծ անտարբերութիւն ցոյց տուեց դէպի իր եղբայրները և չը կատա-րեց իր բարոյական պարտականութիւնը՝ ամոքել հարազատ եղբայրների տանջանք-ները։

Եւ ահա բժ. Մ. Զալիեանց և Կարա-Մուրզա դարձեալ արդարացուցիչ կամ մեղ-մացուցիչ հանգամանք են գտնում անտար-բեր հայ ինտելիգենցիայի համար։ Նրանք ասում են, թէ բարեգործութիւնը պէտք է ազգային չը լինի, թէ ինչու անպատճառ հայն է պարտական օգնելու Ադանայի հայերին և ոչ ռուսը, թիւրքը, ֆրանսիա-ցին, թէ օգնութիւնը միջազգային պէտք է լինի, որովհետև բարեգործութեան զգաց-մունքը համամարդկային է։

«Սոված, հիւանդ, վիրաւոր հային,—իմաս-տասիրում է Կարա-Մուրզան,—օգնութեան հասնել պարտաւոր է իւրաքանչիւրը և ա-մեն մարդ և բացառապէս դայկական ազ-գային պատգամաւորիս այդ մասին ես չեմ ընդունում։ Կամ կայ պարտականու-թիւն՝ մերձաւորին օգնելու և այն ժամա-նակ այդ պարտականութիւնը հանրամարդ-կային է, կամ բոլորովին չը կայ այդ պարտականութիւնը և, հետևաբար, կոչ պէտք է անել մարդկային և ոչ ազգային պարտականութեան»։

Ըստ երևոյթին վեհ, բայց ըստ ներքին բովանդակութեան անիմաստ խօսքեր։ Խօս-քեր, որոնք արտասանվում են միայն խու-սափելու բարոյական պարտականութիւնից, որ ծանրանում է բնական և պատմական օրէնքներով ամեն մի հայ ինտելիգենտի վրա։ Այդ խօսքերի անհեթեթութիւնը փոր-ձած կը լինեն հէնց իրանք յարգելի առաջ-կողները բազմաթիւ անգամ։ Արդեօք երբ երկրագնդի որևէ ծայրում, անկիւնում պա-տահել է մի աղէտ, երկրաշարժ, հրգեհ, համաճարակ ախտեր, բժ. Զալիեանցը և Նարա-Մուրզան իրանց սրտին մօտ են ընդուն-ել այդ աղէտները և շտապել իրանց օգ-նութեան լուսան հասցնել եապօնացուն կամ չինացուն կամ հօտենտոտին։ Հաւա-տացած եմ, որ ոչ։ Եւ այդպէս վարվել են ամենքը։ Կարող են եղած լինել հազա-գիւտ բացառութիւններ, բայց բացառու-թիւնները միայն օրէնքն են հաստատում։ Եւ Զալիեանցն ու Կարա-Մուրզան այդպէս վարվել են ոչ թէ այն պատճառով, որ ան-սիրտ, անգութ մարդիկ են, ոչ, այլ որով-հետև եապօնացու, չինացու, հնդիկի աղէ-տը այնպէս չէ ցաւեցրել նրանց, որքան մերձաւորի՝ հայի կամ դրացու՝ ռուսի, թուրքի աղէտը։ Բայց նրանք, անշուշտ, յաճախ իրանց լուման տուել են երբ աղէ-տի ենթարկվողը եղել է հայը, ռուսը, թուրք-քը, իբրև իր շրջապատի, իր միջավայրի մարդկանց։

Երկանիկ և բարեբաղդ կը լինէր մարդ-կութիւնը, ի հարկէ, եթէ մարդկային մըտ-քի մէջ արմատանար այն հակացողութիւ-նը, թէ երկրագնդի բոլոր մարդիկ եղբայր-ներ են, պարտաւոր հաւասարապէս սիրելու միմեանց։ Բայց, աւաղ, դեռ հարիւրաւոր դարեր, էպօխաներ են պէտք, որ մարդկու-թիւնը շնչի այդ գեղեցիկ գաղափարի մթնոլորտի մէջ։ Ինչպէս ասացինք, դեռ ամենքս ալ ունինք մեր ազգային զգացմունքը։ Ինչպէս ասացինք, դեռ ամենքս ալ ունինք մեր ազգային զգացմունքը։ Բայց ինչպէս շատ ճիշդ կերպով նկատում է «Բակու» թերթը, հէնց այդ անտարբերութիւնը կազմում է հայ ինտելիգենցիայի գլխաւոր մեղքը։ Եւ Ա. Վաչեանցը, մեղադրելով հայ ինտելի-գենցիան անտարբերութեան մէջ, ուրիշ նպատակ չէ ունեցել, եթէ ոչ շեշտել նրա այդ բնորոշ գիծը։

Մի այլ առարկութիւն, որ անում են Կա-րա-Մուրզան և բժշկապետ Մ. Զալիեանցը, աւելի ևս տարօրինակ է թւում մեզ։

Վաչեանցը մեղադրում է հայ ինտելի-գենցիան գլխաւորապէս Ադանայի դէպքի առիթով։ Չը նայելով որ այդ երկրի հայե-րի կրած աղէտը սոսկալի է, բայց հայ ին-տելիգենցիան մեծ անտարբերութիւն ցոյց տուեց դէպի իր եղբայրները և չը կատա-րեց իր բարոյական պարտականութիւնը՝ ամոքել հարազատ եղբայրների տանջանք-ները։

Եւ ահա բժ. Մ. Զալիեանց և Կարա-Մուրզա դարձեալ արդարացուցիչ կամ մեղ-մացուցիչ հանգամանք են գտնում անտար-բեր հայ ինտելիգենցիայի համար։ Նրանք ասում են, թէ բարեգործութիւնը պէտք է ազգային չը լինի, թէ ինչու անպատճառ հայն է պարտական օգնելու Ադանայի հայերին և ոչ ռուսը, թիւրքը, ֆրանսիա-ցին, թէ օգնութիւնը միջազգային պէտք է լինի, որովհետև բարեգործութեան զգաց-մունքը համամարդկային է։

«Սոված, հիւանդ, վիրաւոր հային,—իմաս-տասիրում է Կարա-Մուրզան,—օգնութեան հասնել պարտաւոր է իւրաքանչիւրը և ա-մեն մարդ և բացառապէս դայկական ազ-գային պատգամաւորիս այդ մասին ես չեմ ընդունում։ Կամ կայ պարտականու-թիւն՝ մերձաւորին օգնելու և այն ժամա-նակ այդ պարտականութիւնը հանրամարդ-կային է, կամ բոլորովին չը կայ այդ պարտականութիւնը և, հետևաբար, կոչ պէտք է անել մարդկային և ոչ ազգային պարտականութեան»։

Ըստ երևոյթին վեհ, բայց ըստ ներքին բովանդակութեան անիմաստ խօսքեր։ Խօս-քեր, որոնք արտասանվում են միայն խու-սափելու բարոյական պարտականութիւնից, որ ծանրանում է բնական և պատմական օրէնքներով ամեն մի հայ ինտելիգենտի վրա։ Այդ խօսքերի անհեթեթութիւնը փոր-ձած կը լինեն հէնց իրանք յարգելի առաջ-կողները բազմաթիւ անգամ։ Արդեօք երբ երկրագնդի որևէ ծայրում, անկիւնում պա-տահել է մի աղէտ, երկրաշարժ, հրգեհ, համաճարակ ախտեր, բժ. Զալիեանցը և Նարա-Մուրզան իրանց սրտին մօտ են ընդուն-ել այդ աղէտները և շտապել իրանց օգ-նութեան լուսան հասցնել եապօնացուն կամ չինացուն կամ հօտենտոտին։ Հաւա-տացած եմ, որ ոչ։ Եւ այդպէս վարվել են ամենքը։ Կարող են եղած լինել հազա-գիւտ բացառութիւններ, բայց բացառու-թիւնները միայն օրէնքն են հաստատում։ Եւ Զալիեանցն ու Կարա-Մուրզան այդպէս վարվել են ոչ թէ այն պատճառով, որ ան-սիրտ, անգութ մարդիկ են, ոչ, այլ որով-հետև եապօնացու, չինացու, հնդիկի աղէ-տը այնպէս չէ ցաւեցրել նրանց, որքան մերձաւորի՝ հայի կամ դրացու՝ ռուսի, թուրքի աղէտը։ Բայց նրանք, անշուշտ, յաճախ իրանց լուման տուել են երբ աղէ-տի ենթարկվողը եղել է հայը, ռուսը, թուրք-քը, իբրև իր շրջապատի, իր միջավայրի մարդկանց։

Երջանիկ և բարեբաղդ կը լինէր մարդ-կութիւնը, ի հարկէ, եթէ մարդկային մըտ-քի մէջ արմատանար այն հակացողութիւ-նը, թէ երկրագնդի բոլոր մարդիկ եղբայր-ներ են, պարտաւոր հաւասարապէս սիրելու միմեանց։ Բայց, աւաղ, դեռ հարիւրաւոր դարեր, էպօխաներ են պէտք, որ մարդկու-

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՍԿԱՆԴԻՆԱՒԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Ե *)

Իմ տպաւորութիւնների նկարագրութեան նախկին գլուխներից մէկում մի քիչ գրել եմ Շվէդիայի բնական գեղեցկու-թեան մասին, գլխաւորապէս ծովեզրեայ քաղաքների շիբերների։ Այս անգամ պիտի աշխատեմ ներկայացնել մի քանի տեսա-բաններ, որոնցից ընթերցողը կարող է մի թոյլ գաղափար կազմել այս երկրի թէ բը-նական և թէ արհեստական գեղեցկութեան նկատմամբ։ Բայց նախ պիտի ափսոսալով ասեմ, որ ես գժբաղդաբար չունեմ այն բա-նաստեղծական տաղանդը, որ անհրաժեշտ է բնութեան սքանչելիքներն ի նկատի առ-նելու և պէտք եղածին պէս գովելու հա-մար։

Բնական գեղեցիկ տեսարանների կարելի է հանդիպել Շվէդիայի ամեն կողմերում։ Գետեր, լճեր, անտառներ, մանր ու խոշոր բլրակներ, բլուրներ և նոյն իսկ լեռներ շատ կան ամենուրեք։ Սակայն որպէս Շվէ-դիայի ամենագեղեցիկ մասը համարվում է նրա ներքին նահանգներից մէկը՝ Դալարնէ։

Այդ նահանգը գեղեցկացնելու համար բնութիւնը ոչինչ չէ խնայել։ Ահա դրա «աչքը»՝ Սիլեան լիճը, որի արևելեան ափին գտնվում է Բէթվիք գիւղը—«Դալարնէի Աբ-կաղին»—որտեղ երկուսերեք շաբաթ մնա-ցել պատեհութիւն ունեցայ։ Քանի՞ քանի անգամ նստած տատնեակ ընկերներով դիտել ենք արևի մայր մտնելը։ Բոլոր ամպերն այդ ժամանակ կարմիր ոսկու են վերած-վում. արեգակի ճառագայթներն ստանում են այդպիսի կարմիր գեղեցիկ մի գոյն, որ մարդ նայելով չէ կշտանում։ Իսկ երբ արևն իր վերջին ճառագայթներով ողողում է մեղմ զեփիւռից հաղիւ շարժվող լճի երեսը, այլևս անկարելի է լինում ուրիշ կողմ նա-յել և ուրիշ բան տեսնել. մի կախարդա-կան զօրութիւն ստիպում է քեզ աչքերդ սևեռել այդ ոսկեայ ծովի վրա։

Մեր և այդ ծովակի մէջտեղ միայն 150—200 սաժէնաչափ մի տարածութիւն է։ Մեր վիլլայից ներքև անցնում է երկաթուղին. դրանից ցած ծառեր ու հերկեր, գարի, հա-ճար ու գետնախնձոր, դարձեալ ծառեր. ա-պա գալիս է ծովակը իր մեղմ ալիքներով, որի ափերին կարելի է ժամերով նստել և քարերի մէջ լողացող ձկներով զուարճանալ։

Տեղ տեղ ընկած է մի նաւակ. ափից մի քիչ հեռու մի խարխուլ փայտե շինութեան մէջ կարող էք գտնել թիակները, վերցնել ու թիավարել։ Լճի միւս կողմը 4—5 վերա-տի վրա դարձեալ երևում է շոգեշարժի ծուխը, անտառը, ծառերի մէջ շարված գիւ-ղական կարմիր շինութիւնները և դրանց չորս կողմում իրանց կանոնաւոր կերպով մշակված հողաբաժիններն՝ դեղին, կանաչ, ան՝ կարծես շախմատի տախտակ լինի։ Քիչ հեռու դէպի աջ կանգնած է հինաւուրց, միջնադարեան եկեղեցին—«Ծնողաբերաւ նո-րահարսը»—իր բարձր գմբէթով և դրա մօտ գտնվում է Բէթվիքի գիւղը։ Դրանից ոչ հեռու մի գեղեցիկ ամրոց։ Ամենքս ալ գիտենք, թէ ինչ գեղեցիկ բան է ամրոցը։ Ինչ ասես կարելի է գտնել դրանում։ Ամրոցի ներսը մտնելիս, ինչպէս ասացինք, դեռ ամենքս ալ ունինք մեր ազգային զգացմունքը։ Բայց ինչպէս շատ ճիշդ կերպով նկատում է «Բակու» թերթը, հէնց այդ անտարբերութիւնը կազմում է հայ ինտելիգենցիայի գլխաւոր մեղքը։ Եւ Ա. Վաչեանցը, մեղադրելով հայ ինտելի-գենցիան անտարբերութեան մէջ, ուրիշ նպատակ չէ ունեցել, եթէ ոչ շեշտել նրա այդ բնորոշ գիծը։

Մի այլ առարկութիւն, որ անում են Կա-րա-Մուրզան և բժշկապետ Մ. Զալիեանցը, աւելի ևս տարօրինակ է թւում մեզ։

Վաչեանցը մեղադրում է հայ ինտելի-գենցիան գլխաւորապէս Ադանայի դէպքի առիթով։ Չը նայելով որ այդ երկրի հայե-րի կրած աղէտը սոսկալի է, բայց հայ ին-տելիգենցիան մեծ անտարբերութիւն ցոյց տուեց դէպի իր եղբայրները և չը կատա-րեց իր բարոյական պարտականութիւնը՝ ամոքել հարազատ եղբայրների տանջանք-ները։

Եւ ահա բժ. Մ. Զալիեանց և Կարա-Մուրզա դարձեալ արդարացուցիչ կամ մեղ-մացուցիչ հանգամանք են գտնում անտար-բեր հայ ինտելիգենցիայի համար։ Նրանք ասում են, թէ բարեգործութիւնը պէտք է ազգային չը լինի, թէ ինչու անպատճառ հայն է պարտական օգնելու Ադանայի հայերին և ոչ ռուսը, թիւրքը, ֆրանսիա-ցին, թէ օգնութիւնը միջազգային պէտք է լինի, որովհետև բարեգործութեան զգաց-մունքը համամարդկային է։

«Սոված, հիւանդ, վիրաւոր հային,—իմաս-տասիրում է Կարա-Մուրզան,—օգնութեան հասնել պարտաւոր է իւրաքանչիւրը և ա-մեն մարդ և բացառապէս դայկական ազ-գային պատգամաւորիս այդ մասին ես չեմ ընդունում։ Կամ կայ պարտականու-թիւն՝ մերձաւորին օգնելու և այն ժամա-նակ այդ պարտականութիւնը հանրամարդ-կային է, կամ բոլորովին չը կայ այդ պարտականութիւնը և, հետևաբար, կոչ պէտք է անել մարդկային և ոչ ազգային պարտականութեան»։

Ըստ երևոյթին վեհ, բայց ըստ ներքին բովանդակութեան անիմաստ խօսքեր։ Խօս-ք

թիւնը հանի այդ զարգացման, քանի որ դեռ իրար կողքին ապրող հայը, թուրքը, վրացին ոչ միայն եղբայրներ չեն համարում իրանց, այլ յաճախ թշնամաբար են վերաբերվում միմեանց և թշնամութիւնը արտայայտում նոյնիսկ արիւնհեղութեամբ։

Եւ մարդկային զարգացման այդպիսի ստոր աստիճանի շրջանում քարոզել, թէ հայը նոյնքան պարտականութիւն ունի դէպի իր տառապեալ և աղէտաւոր եղբայրը, որքան ունի եւրոպացին, հնդիկը, հայը, որքան ունի եւրոպացին, հնդիկը, ռուսը, արաբը,—մի քարոզ, որ ուղղակի նը-շանակում է, թէ հայը պարտաւոր չէ օգնել հային,—դա նշանակում է զօրեղացնել հայի մէջ առանց այն էլ թոյլ եղբայրական զգացումը դէպի հայը, դա նշանակում է աշխատել դիտմամբ արդարացնել հայ ինտելիգենտի մեղաւոր անտարբերութիւնը դէպի իր ժողովրդի վիճակը և աղէտները։

Մենք, որ մինն ենք զինուորներից այն անագին բանակի, որ կոչվում է խաղաղասիրական (pacifiste) և որի նպատակն է նուաճել մարդկային միտքը յօգուտ տիեզերական եղբայրութեան, մենք ստիպված ենք այնուամենայնիւ դատապարտել հանրամարդկային զգացմունքի պատրուակով ազգային անտարբերութիւն քարոզող միտքը, որովհետև մենք համոզված ենք այն ճշմարտութեան մէջ, թէ լաւ մարդասէր լինելու համար, պէտք է լինել նաև լաւ հայրենասէր, ազգասէր։ Մարդասիրութեան մեծ ծառի կորիզը կազմում է ազգասիրութիւնը, ի հարկէ, առողջ և ոչ հիւանդոտ, շովէն ազգասիրութիւնը։ Ով փոքրիկի մէջ հաւատարիմ չէ իր կոչմանը և պաշտօնին, նա հաւատարիմ չէ կարող լինել և մեծի մէջ։

Այո, օգնեցէք օտարին, օգնեցէք չինացուն, պարսկին, հնդիկին, հօտենտօտին. դա մարդասիրական պարտականութիւն է. բայց մի արդարացրէք ձեր անտարբերութիւնը դէպի ձեր եղբայրը, արիւնակիցը նրանով, թէ դուք կամենում էք լինել միայն մարդասէր։

Մենք միանգամայն արդարացնում ենք Ա. Վաշճանցի մեղադրանքը հայ ինտելիգենցիայի հասցէին, անտարբերութիւն, որ այնքան փայլուն կերպով արտայայտվեց Աղանայի դէպքի առիթով։ Շանրիար

ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ՄԻ ԼՈՒՐ

«Հովիւ» թերթը մի լուր է հաղորդում Բագուից, որ երկու չնաս ազգակցութեան վեց աստիճանի պսակի թոյլտուութիւն է տրված «ոչ օրինակ այլոց»։ Բայց թերթը դրանով չէ բաւականանում, այլ հարկ է համարել աւելացնել, որ 1) «պսակվող երիտասարդներն՝ երկուսն էլ քաղաքիս հայ հարուստ դասակարգին են պատկանում—Առաքելեան և Մելիքեան», 2) այդ գործի համար աշխատողներն ու գլուխ բերողներն եղել են՝ Բագուում Զաւէն վարդապետը, Շամախում՝ Անանիա արքեպիսկոպոսը, իսկ Էջմիածնում՝ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան»։ Այս տեղ ակնարկը այնքան ակներև է, որ հասկանալի է ամենքին, մանաւանդ որ թերթը խրատ ևս կարդում է Կաթողիկոսին, ասելով. «Մենք 6-րդ աստիճանի իշեցնելու դէմ չենք. եթէ հնարաւոր է աւելի իշեցրէք. բայց թող դա լինի օրէնք ամենի համար և ոչ միայն հարուստների «ոչ յօրինակ այլոց»-ներով». և մի քիչ վերևում՝ «լաւ կը լինէր, որ այժմեան Վեհափառն էլ 6-ը 5 աստիճանի իշեցնէր, քան թէ հէնց այժմեանից բացառութիւնների և «ոչ յօրինակ այլոց»-ների դռներ բաց անվէր ի յարգանս և ի սէր այս և այն գործակալի, կամ առաջնորդի և սինօդի անդամի»։

Այս ոճով գրված լուրը ստիպում է մեզ ասել, որ կամ խնդրի մէջ թիւրիմացութիւն կայ, կամ լուրը արդիւնք է մի չարամիտ դիտաւորութեան։ Մենք չենք կարծում, որ Վեհափառ Կաթողիկոսը, որ յայտնում, որ մինչև օծումը մտադիր չէ միջամտել էջ, թէ մինչև օծումը մտադիր չէ միջամտել գործերին, զբաղվէր ամուսնալուծութեան խնդրով, երբ նոյն իսկ վարչական գործերի ղեկավարութիւնը դեռ թողել է տեղապահին։ Ցանկալի էր, որ կաթողիկոսական դիւանը բացատրէր այդ խնդիրը, իսկ Զաւէն վարդապետի, Անանիա արքեպիսկոպոսի և մանաւանդ Մեսրոպ վարդապետի վրա անհրաժեշտութեան կայ հերքել իրանց դէմ եղած շատ պարզ ակնարկը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիշի գիւղ (Շուշու գ.), 4 օգոստոսի

Մեզ մօտ ցորենի բերքը, համեմատած նախանցեալ տարիներին, շատ լաւ է։ Առատ բերք է սպասվում նաև խաղողից։ Վերջապէս մի շարք երկար ու ձիգ տարիներից յետոյ գոնէ գիւղացին ազատ շունչ կը քաշի։ Բացի ուրուականն այնպէս սարսափեցրել է նրան, որ օր ու գիշեր, գէթ մի ժամ հանգիստ չառնելով, աշխատում է դաշտային աշխատանքները սովորականից առաջ վերջացնելու։

Գիւղումս գոյութիւն ունի միդասեան երկսեռ ծխ. դպրոց, որի 1908/9 ուսումն. տարին, շնորհիւ հոգաբարձուների անտարբերութեան, անսնախանձելի դրութեամբ վերջացաւ։ Գիշին ունենալով 200—250 ծուխ և լինելով հարուստ գիւղ՝ նոյնիսկ կարող է պահել երկդասեան դպրոց, բայց, շնորհիւ գիտակից, գործունեայ անձանց բացակայութեան, միդասեան դպրոցն էլ տխուր վախճան ունեցաւ։

Գիտակից գիշեցիների, մանաւանդ հայրենակիցների ուշադրութիւնն ենք հրաւիրում։ Եթէ չեն ուզում մանուկ սերունդը զրկել ուսումից, քանի դեռ ուշ չէ՝ թող շտապեն բարեկարգել դպրոցի վիճակը, դնելով նրան հաստատուն հիմքերի վրա։

Նիկ. Յարութիւնեան

Սամարղանդ, 26 յուլիսի

Մի քանի օր առաջ մի գործակատար խանութից խանութ և տնից-տուն ընկած՝ ստորագրութիւններ էր դնել տալիս Վեհ. Կաթողիկոսին ուղղելիք մի խնդրագրի տակ։ Այդ խնդրագրով ստորագրողները դիմում էին անում Վեհին, որ նա միջնորդի բարձրագոյն իշխանութեան առաջ անցեալ տարվայ յուլիսի 10-ից ի վեր բանտում գտնվող՝ Սամարղանդի Ռուբէն ք. Բէկզիլեանին ազատելու համար։

Նպատակը չափազանց գովելի է, բայց մարդասիրական այդ գովելի նպատակին հասնելու համար ընտրված միջոցը միանգամայն անյարմար։ Այդ պատճառով էլ գաղութիս քիչ շատ բանիմաց մարդիկ հրաժարվում էին իրանց ստորագրութիւնը դնել նման խնդրագրի տակ։ Հէզոք

Սղնախ, 3 օգոստոսի

1902 թ. մի խումբ երիտասարդներ շաբաթով տեղիս ս. Գէորգ եկեղեցու ներսը ընտրվեց մի համեստ առանձնարանում Դ. Տէր-Յակոբեան։

Նա մեծ ուշադրութիւն դարձրեց եկեղեցու վրա. և այսօր ս. Գէորգ եկեղեցին փայլում է իր բարեկարգութեամբ և մաքրութեամբ։ Օէր-Յակոբեանը մեր երեցփոխների մէջ օրինակելի է, հարկաւոր ժամանակ իր գրպանից ծախսում է փող եկեղեցու վրա, եկեղեցին պարտ է նրան մօտ 120 ր., իսկ երբ նրա մօտ մնում է եկեղեցու գումար, նա տոկոս է տալիս։

Ժողովուրդը, տեսնելով նրա ջանասիրութիւնը, նորից վերընտրեց նրան, յանձնելով և մոմապահեստի կառավարութիւնը։

Մի շաբաթ է, ինչ բանտարկված է ս. Կարապետ մայր եկեղեցու երեցփոխ Աբրամ Ղուլիջանեանը։ Պատճառը համարում են մատնութիւն։ Այժմ ս. Կարապետ եկեղեցու մոմավաճառութիւնը ժամանակաւորապէս յանձնված է նոյն Տէր-Յակոբեանին։

Մինչդեռ մեր քաղաքում փակվեց գրականութիւնը, գիւղերում գիրք կարդալը դառնում է ստիպողական։ Բոգրիսիէվի գիւղի ձրի գր.-ընթերցարանը մի համեստ հիմարկութիւն է։ Ընթերցանութիւնը շատ է տարածված այդ գիւղում և գր.-ընթերցարանի վարչութիւնը չէ կարողանում բաւականութիւն տալ ժողովրդի պահանջներին՝ գրքերի սակաւութեան պատճառով։ Գրադարանն ունի 40 անդամ։ Ն. Ն.

Օշական, 4 օգոստոսի

Ամսիս 4-ին Օշականի Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան 4 անդամները գնացել էին Բիւրական Վեհափառ Կաթողիկոսի մօտ՝ խնդրելու Վեհափառից Օշականում գտնված վանքապատկան անտառ-այգին, որտեղ ընկերութիւնը մտադիր է պարապել մի քանի տեսակ գիւղատնտեսական ճիւղերով։

Այդու մէջ գտնված շինութեան մէջ կը լինի ջուլհականոց արհեստանոցը և կը մտցվի դրա հետ շերամապահութիւն, թռչնապահութիւն, անասնապահութիւն, մեղուապահութիւն, գինեգործութիւն և կողովագործութիւն. անտառի մի մասում կը լինի մանկարան, որը կը տայ ընտիր տունկեր Օշականի շրջանի բոլոր գիւղերին։

Ընկերութիւնը մտադիր է Թիֆլիսի վարչութեան միջոցով զանազան գիւղատնտեսական գործիքներ բերել տալ գիւղացիների համար։ Վեհափառը լսում էր այս բոլորը և շատ ուրախ էր, որ հայկական գիւղացիութեան մէջ այսպիսի մի առաջադիմական քայլ է անվում։

— Լաւ կը լինէր,—ասաց Վեհափառը,—որ գործէիք ամբողջ շրջանի համար և բաց անէիք դռները բոլոր ցանկացողների համար. ես շատ գոհ եմ, որ այդպիսի մի ընկերութիւն է կազմվում մի հայ գիւղում. ես կաշխատեմ աջակցել իմ կողմից. ձեր խնդիրը դուք գրաւոր ներկայացրէք. օրհնեալ լինիք։

Պատգամաւորները գոհ սրտով հեռացան. վերջապէս ընկերութեան մտադրութիւնը կիրականանայ։ Եթէ այդ այդին կը յանձնեն, նա կը տայ մի քանի փորձեր, թէ ինչով կարող է օգտվել թշուառ օշականցին։

Վ.

Ղշլաղ, 10 օգոստոսի

Ամսիս 9-ին ծխ. դպրոցում կայացաւ ժողովրդական երկրորդ դասախօսութիւնը։

Կ. Վարժապետեանը հանրամատչելի լեզուով խօսեց «Պարարտացուցիչ նիւթերի և սերմափոխութեան մասին»։ Գիւղական խուռն բազմութիւնը հետաքրքրութեամբ լսում էր դասախօսին։

Մ. Սողոմոնեանը խօսեց մի քանի հրատապ հարցերի մասին։

Ժողովրդական երրորդ դասախօսութիւնը կայանալու է օգոստոսի 17-ին։

Ահա այս հինգերորդ օրն է, որ ամպոտ եղանակի և անձրևների պատճառով հնարաւոր չէ լինում կալը ծեծել։ Եթէ այդպէս շարունակվի, գիւղացին կանօնաւոր բերք չի ստանայ։ Մ. Ղ.

ԴՐՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՕՆԴԸ

Օգոստոսի 7-ին լրացաւ Գրականական ֆօնդի յիսնամեակը։ Այդ առիթով «Բ. Բ.» լրագիրն ասում է.

«Վաղը կը լրանայ յիսուն տարին Գրականական ֆօնդի կանօնադրութիւնը հաստատելու օրից։ Փոխադարձ օգնութեան պրոֆէսիօնալ ընկերութիւնների մէջ առաջիններից մէկը, Գրականական ֆօնդը, ի նկատի ունի այն պրոֆէսիան, որը մինչև այժմ ամենից քիչ ապահովված է ուրիշ ազատ պրոֆէսիաների շարքում, այն է գրականագէտների և գիտնականների պրոֆէսիան։ Գրականագէտների աշխատանքը, որպէս և հասարակական-անհրաժեշտ աշխատանքի իւրաքանչիւր տեսակը, թուում է, թէ պէտք է ապահովութիւն տար աշխատաւորներին, պէտք է վստահութիւն տար նրանց, որ իրանց ընտանիքները, իրանց մահից յետոյ, չեն մնայ առանց ապաստանի և անօգնական և հէնց իրանք էլ ծերութեան դէպքում հարկադրված չեն լինի ողորմութիւն խնդրել։ Իրականութիւնը անխնայաբար հերքում էր այդ տեսականապէս անհերքելի սկզբունքը. ոչ միայն սովորական գրականագէտները, գրչի արհեստաւորները, այլ և հանճարով օժտված անձինք կարօտութեան մէջ էին։ Անձնուէր ծառայութիւնը հայրենիքին գրչի միջոցով, չը նայելով գրողի ծառայութիւնների գնահատմանը ընթերցող հասարակութեան կողմից, միշտ չէր ապահովում գրողին մինչև անգամ հացի կտոր և չէր տալի վստահութիւն, որ նրա մատաղ տարիները մուրացկան չեն մնալու։ Բաւական է ասել, որ Գրականական ֆօնդը հարկադրված էր թոշակ տալ Բէլինսկու այրուն, որի հեղինակութիւններով ահել և դաստիարակվել են ռուս ինտելիգենցիայի սերունդները։ Բնական է, որ ռուսաց կեանքի և գրականութեան կենսաբար շրջանում գրականագէտների լաւագոյն մարդկանց մէջ միտք յղացաւ այնպիսի պրոֆէսիոնալ կազմակերպութիւն ստեղծել, որը յանձն առնէր այդ անբնական երևոյթի դէմ կռուելու գործը։ Անենկով, Տուրգենեվ, Զերնիշէվսկի, Դրուժինին, Կավելին, Եգոր Կովալէվսկի, Գրաեվսկի, Դուդիշկին, Գալախով և ուրիշ մի քանիսները ձեռք զարկին իրագործելու այդ միտքը և համեմատաբար նպաստաւոր պայմանների ժամանակ կարողացան հաստատել տալ ֆօնդի կանօնադրութիւնը։ Ընկերութեան դրամագլուխներն աճում են անփոփոխ (գլխաւորապէս անձեռնմխելի ֆօնդը) և աճում են առաւելապէս ֆօնդին մասնակցողների՝ գրականագէտների տուրքերից ու նրանց կատարած դրամագլուխներից ու գոյքերից։ Իսկ հասարակութիւնը, «բարեկամ-ընթերցողը» չէ շտապում օգնութեան ձեռք մեկնել գրողին։ Ռուս ընթերցող հասարակութեան ողբալի անտարբերութիւնը դէպի Գրականական ֆօնդը երևում է նրանից, որ ֆօնդի եկամուտների ըուբբիկայում 1891 թվին դրված է 3 ր., 1892 թ. 10 ր. և 1894 թ. 2 ր.։ Մեծ չէ մասնակցութիւնը ֆօնդին և գրավաճառների ու հրատարակիչների կողմից, որոնք իրանց բարօրութիւնը ստեղծում են գրականագէտների աշխատանքի վրա»։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թիֆլիսի նահանգի մի քանի տեղերում աշնանացանն արդէն սկսվել է։

— Մեր թղթակիցներից մի քանիսը յաճախ ուղարկում են մեզ բանդերօլով յօդուածներ առանց պաշտպանելու պօստային կանօններով պահանջված ձեւականութիւնը, այն է՝ առանց գրելու բանդերօլի վրա «ДЛЯ ПЕЧАТИ» խօսքերը։ Այդ պատճառով էլ պօստային վարչութիւնը ստիպում է մեզ վճարել տուգանք ազկատապատիկ։ Ամբաղդութիւնը խնդրում է վերոյիշեալ թղթակիցներին ուշք դարձնել այդ հանգամանքի վրա։

— Իժեւսկը Մէջի կազմած նախագիծը Ծալկայի Ջրասցքի կառուցման մասին մարդասիրութիւն կայ նշանաւոր փոփոխութիւնների ենթարկել այդ ձեռնարկութիւնը էժանացնելու համար։ Քաղաքային վարչութիւնը այդ առիթով զրագրութիւն է սկսել բեկեցիկ տան մէջ առաջին սուրճը խմում են դեռ ևս չը լուացված, շատ անգամ անկողնու մէջ նստած։ Սուրճ ու թխուածքներ, հաց ու կարագ անհրաժեշտ կայ ամեն մի տան մէջ։ Եւ այդ օրը մենք առնուազն 4 անգամ սուրճ խմեցինք. բայց ոչ թէ կաթով, այլ սերով։

Թէյի և սուրճի հետ կաթ երբէք չէ գործածվում, այլ միայն հում սեր, քանի որ Շվէդիայում կաթը չեն եփում։ Սերզատը գիւղատնտեսութեամբ պարապող ամեն մի տան մէջ կարող էք տեսնել։

Երեկոյեան ժամը եօթին կովերն ու այծերը անտառից տուն եկան կթվելու և յետոյ դարձեալ անտառ վերադառնալու և գիշերելու համար։ Հովիւներ և հօտի պահպանութեան համար գամփռներ պէտք չեն։ Մի փոքրիկ աղջիկ բաւական է։ Գողութիւն և անպատուութիւն շատ հազուադէպ երևոյթներ են։ Այդ պատճառով ամեն մարդ կարողանում է իր ուզած տեղն ու իր ուզածին պէս ապրել։ Կառավարութիւնն ու ոստիկանութիւնը լուրջ կերպով հսկում են, գիտենալով որ այդ բանի համար են իրանք ժողովրդից ռոճիկ ստանում։ Շվէդիայում ամեն մարդ իր պարտականութիւնը ճանաչում է և ամեն մարդ իր պարտականութիւնը կատարում է։ Եւ ուրիշ կերպ անկարելի է։ Կառավարութիւնը և կառավարութեան պաշտօնեաները ժողովրդի համար են և ոչ թէ ժողովուրդը կառավարութեան համար։ Ժողովուրդը պահանջում է, որ կառավարութիւնն իր պարտքը կատարէ։ Եւ կառավարութիւնը գիտէ, որ ժողովրդի այդ պահանջն արդար է։ Ուրիշ կերպ լինել չէ կարող։

Զարմանալին այս է, որ չը նայելով երկրի բնական գեղեցկութեանը և այն շատ հետաքրքրական տեսարաններին, որ Շվէդիայի համարեա ամեն կողմերում կարելի է տեսնել, դարձեալ, ինչպէս արդէն մի անգամ յիշել եմ, տուրիստներ շատ քիչ են պատահում, մանաւանդ օտար երկիրներից։

Բայց էլ աւելի զարմանալի է, որ խաչագողները տուրիստներից աւելի քաջ են եղել և այցելել են Շվէդիայի նոյնիսկ հեռաւոր անկիւնները և քիւրդերից հալածված ու կողոպտված հայ ձեռնալով օգնութիւն խնդրել, ինչպէս ինձ շատ տեղ պատմեցին։ Ինչպէս երևում է, նրանք այստեղ լաւ հունձ են ունեցել, որովհետև Շվէդիայում ոչ ոք չէ կարող հայն ու ասորին միմեանցից զանազանել։

Քաջ մարդիկ են այդ խաչագողները։ Երբ Ռուսաստանում «հունձը փչացաւ» նրանց համար, իրանց աչքերը դարձրին Միջին, Արևմտեան և Հիւսիսային Եւրոպայի վրա։ Իսկ հայկական կոտորածներն ու հալածանքները հիանալի առիթ եղան նրանց համար իրանց հայ ձեռնալու և «քրիստոնեայ եղբայրների» գթութիւնը հայցելու։

Բայց խաբեբայութիւնը վատ առաջնորդ է։ Շուտ թէ ուշ ճշմարտութիւնը բացվում է։ Ինձ առաջարկել են շվեդական լրագիրների մէջ նրանց մասին խմացած գրել։

Սակայն մինթէ խաչագողները ամաչել գիտեն։ Մ. Դերձակեան

(Կը շարունակվի)

բժշկական օգնության գործի համար Կովկասի Փոխարքայի դիւանատունը բաց է թողել 9900 ռուբլի։

◆ «Т. Л.»-ը հաղորդում է, որ վերջերս Երևանում ձերբակալված իշխ. Յովսէփ Արղութեանին այս օրերս բերել էին Թիֆլիսի Մետեխի բանտը, իսկ օգոստոսի 10-ին էտապով ուղարկվեց Նովօչերկասկ։ Նա մեղադրվում է «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ։

◆ Լուրերի վրա յենվելով «Зак.» հաղորդում է, որ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը մերժել է Ցագվերի գիւղի պատգամաւորութեան միջնորդութիւնը այդ գիւղում գրված էկզէկուցիան վերացնելու մասին։

◆ Հարց է յարուցված շուտափոյթ առաջ մղել այն նախագիծը, որի համաձայն արտասահմանից առաջին տեսակի աւտոմոբիլներ են բերվելու մոտծած միսը սպանդանոցից քաղաք փոխադրելու համար։

◆ Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Մի հայ տիկին, որի ամուսինը ահա մի տարի է ինչ բանտարկված է, զուրկ լինելով ապրուստի միջոցներից թախանձանօք խնդրում է բոլոր նրանց, որոնք կանանց զգեստի կար ունեն, տալ իրան կարելու համար։ Տիկինը յայտնի է որպէս փորձված վարպետուհի, բայց ներկայիս չէ կարողանում գտնել աշխատանք, որպէսզի կարողանայ կերակրել իր բազմանդամ ընտանիքը։ Հասցէն՝ Шелковниковская № 11, հարցնել տիկին Ս. Բ.-նին»։

◆ Այսօր, Առևտրական Դպրոցում (I Тумановская ул. № 13) տեղի կունենայ Սամսոն Գալաչեանի երկրորդ դասախօսութիւնը՝ «Կոօպերացիայի շարժումը Արևմտեան Եւրոպայում»։ Սկիզբն է երեկոյեան 7½-ին։ Մուտքը ձրի է բոլորի համար։

◆ Առևտրական դպրոցում (I Тумановская № 13) տեղի են ունենում մանր վարկի հաշապահութեան դասընթացքի քննութիւններ։ Ինչպէս յայտնի է, այդ դասընթացքը կազմակերպել է Բագուի Կուլտուրական Միութեան հողային սեկցիան, որի նպատակն է գիւղական և գաւառական ուսուցիչներին ծանօթացնել գիւղական մանր վարկի հաշապահութեան հետ։ Քննութիւնները աջող են ընթանում։

◆ Օգոստոսի 10-ին Եւգենի քահանայ Վինոգրադովի դուստրը, որ ապրում է Գրիբոյէդովսկայա փողոցում № 6 տանը, յայտնեց ոստիկանութեան, որ այդ օրը նա մտնելով երդուեալ հաւատարմատար Յովհաննէս Սպէնդիարեանի բնակարանը Եւանգուլեան փողոցում, որի բանալին նա ստացել է տանտիրոջից, երևան է հանել գողութիւն, որի քանակը նա չէ կարող յայտնել Սպէնդիարեանի բացակայութեան պատճառով։

◆ Երէկ ոստիկանութիւնը և զինուորապահակները ցերեկվայ ժամը 12-ից շուրջկալ կատարեցին IV քաղաքամասում և ձերբակալեցին մի քանի անգործ և անանցաթուղթ մարդկանց։

◆ Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը Ռազմավիրական ճանապարհի կայարանական շինութիւնների վերանորոգութեան համար յատկացրել է 8500 ռուբլի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Պետերբուրգում գրականագէտների և գիտնականների դրամարկղը ադմինիստրացիայի հրամանով փակելու լուրը խլրտում առաջացրեց գրականական աշխարհում։ Եկան թոշակառուները փող պահանջելով։ Թոշակ ստացողներից մէկը, Մակարով, գոհ չմնալով դրամարկղի վարչութեան քարոզչության բացատրութիւններից, դիմեց տելեֆոնով մինիստրի օգնական Կրիժանովսկուն, պահանջելով որ իրան թոշակ տրվի, որովհետև ինքն ապրուստի միջոց չունի։ Այն անձը, որի պատճառով դրամարկղը փակվեց, ներումն ստացած Պետրաշեվսկին է, որը դրամարկղի անդամ էր և իրաւունք ունէր նպաստ ստանալ։ Թոշակ տալը թոյլատրված է մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ նպաստների տալը և դրամարկղի այլ օպէրացիաները արգելված են։

◆ Բերլինի լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստր Կոկովցով թողնում է իր պաշտօնը, որովհետև սկզբունքով դէմ է Ռուսաստանի ֆինանսա-մնացորդային մերձաւորութեանը Անգլիայի հետ։

◆ Ռուսաստանի հոգէհաղաւան-կաթոլիկների միտրոպոլիտի պաշտօնի համար Հռոմի պապն առաջարկեց արքեպիսկոպոս Սիմոնին, Պետերբուրգի կաթոլիկ ակադէմիայի ռէկտորին, կաթոլիկ եկեղեցու ամենաժողովրդական գործիչներից մէկին։ Նա արդէն 60 տարեկան է։ Պապը մի քանի անգամ առաջարկել է նրան Ռուսաստանի կաթոլիկ եկեղեցիների միտրոպոլիտի պաշտօնի համար, սակայն նրա առաջարկութիւնը աջողութիւն չէ ունեցել։ («Р. У.»)

◆ Վերջերս, ինչպէս յայտնի է, Վլադիմիր Բուրցէվ զանազան մերկացումներ է անում արտասահմանեան մամուլի մէջ ռուսական կառավարչական գործակալների գործունէութեան վերաբերեալ։ Այժմ «Россія» թերթը այդ առիթով հաղորդում է հետևեալը. «Ի նկատի ունենալով վերջերս արտասահմանեան մամուլում երևցած յօդուածները տերբօրիստ Վլադ. Բուրցէվի կողմից, ուղղված կառավարչական օրգանների գործունէութեան դէմ, անհրաժեշտ է յայտարարել, որ կառավարութիւնը հնարաւոր չէ համարում բանակուռ մէջ մտնել այդ անձի հետ։

◆ «Ռուսաց ժողովրդի դաշնակցութեան» անդամները մի շարք ժողովներից յետոյ որոշել են բանալ Ռուսաստանում ամենուրեք ստորագրութիւն, միջնորդելու համար որ Միլիւկովը աքսորվի Ռուսաստանից։ Նա մեղադրվում է ռուս դաշնակցականների կողմից այն բանի մէջ, որ նորերս Անգլիայում արտասանած իր մի ճառի մէջ ասել է թէ ինքը կազմում է «Նորին Մեծութեան օպոզիցիա»։

◆ Ֆինանսների մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում է «Нов. Вр.» թերթը, դեֆիցիտը ծածկելու համար ծրագրում է մի քանի նոր հարկեր մտցնելու։ Արդէն մշակված են օրինագիծ տուրքի ենթարկելու մասնաւոր անձանց գրաւականով փոխ տրվող դրամագլուխները։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը թոյլատրել է տիկին Վէնգերովային բանալ Պետերբուրգում մասնաւոր բարձր բժշկական ինստիտուտ երկու սեռի համար։ Ընդունելութիւնը ինստիտուտ մտադրութիւն կայ կայ անել հենց այս աշնանից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 11 օգոստոսի

«Հորիզոնի» № 8-ում մի ոմն՝ «Ընթերցող» առաջ է գալիս Ա. Արեղեանին լակէյական ծառայութիւն մատուցանելու և նա իր այդ անսխալանելի զգացմունքով այնքան գոռեղ կերպով է համակված, որ համբերութիւն չէ ունեցել, անգամ մինչև յօդուածս աւարտելուն սպասելու։

Իսկն ասած չիմացայ թէ այդ յարգելի Ընթերցողը« երևան է եկել ինձ հայհոյելու թէ՞ առաջ բերած փաստերը ջրելու...

Ինչ վերաբերում է նրա հայհոյանքներին, անուշադրութեան իմ մատնում, իսկ բերած հերքումներին ես կը պատասխանեմ այն ժամանակ միայն երբ ընթերցող և նմանօրինակ պարոններ «հայհոյաբանական» մեծ պաշարի հետ կունենան և մի փոքր բարոյական ըիսկ, իրանց իսկական անունները ասպարէզ իջնելու։ Եւ այդ երկու նկատումներով, նախ՝ որ հասարակութիւնը և ապա այն դպրոցների հոգաբարձութիւնը, որոնց մէջ դրանք պաշտօնավարում և թերևս աշխարհագրութեան դասեր ունեն, հնարաւորութիւն կունենան ճանաչելու նրանց։ Ա. Շիրին

—

Ղօչան, 25 յուլիսի

Լրագիրների տուած տեղեկութիւնից, սրտի դառն ցաւակցութեամբ իմացայ, թէ որքան ահռելի սով է թագաւորում Ագանայի մէջ, մեր թշուառ ազգակիցների շրջանում։

Ուստի կատարելով մի բարոյական պարտականութիւն շտապեցի հանգանակութիւն բաց անել տեղիս մի բուռն հայ հասարակութեան շրջանում, որը չը նայած որ ըստ մեծի մասին պատկանում էր պրոլետար-գործակատար դասակարգին, բայց այսուամենայնիւ սիրով ու գոհունակութեամբ մասնակից եղաւ հանգանակութեան։

Այսօր ուղարկում եմ խմբագրութեանդ հանգանակված գումարը, 395 դրան, որ հաւասար է ռուսական 71 ռուբլու, յօգուտ Ագանայի դրամայից վնասված տարաբաղդ աղէտեալների և խնդրում հասցնել ըստ պատկանելոյն։

Նուիրատուներն են.—Ի. Սամբեան, Ս. Յովհաննիսեան և Հ. Յովսէփեան՝ 50-ական դրան, Մ. Ղարիբեան, Սիւնեցի, Յ. Միքայէլեան, Մ. Դաւթեան, Ա. Յարութիւնեան, Ն. Միրզաեան և Վ. Յակոբեան՝ 20-ական դր., Ա. Նասիբեան, Յ. Ոսկանեան, և Բ. Խաչատրեան, 15-ական դր., Մ. Շահնազարեան, մի ճանապարհորդ, Ս. Մինասեան և Ս. Ոսկանեան, 10-ական դր., ոմն, վարժապետ, անցորդ և ոմն՝ 5-ական դր.։

Ի դիմաց նուիրատուների՝

Հ. Յովսէփեան

Յ. Գ.—Ուղարկում եմ նոյնպէս և 10 ր., որը գոյացել է վերոյիշեալ նպատակով տեղս մի խումբ սիրողների մասնակցութեամբ տրված մի ներկայացումից։ Խնդրում եմ դա ևս հասցնել ըստ պատկանելոյն։ Նոյն

—

Կարս, 29 յուլիսի

Կարսից «Մշակի» № 157-ում «Ծխական» ստորագրութեամբ տպագրված յօդուածով եկեղեցիների «լուսագին» և էջմիածնի «հոգեբաժին» նուէրների՝ իբր թէ իւրացումը վերագրված էր ընդհանրապէս Կարսի բոլոր քահանաներին (թուով 10), վերջիններս «աւազակներ» անուանելով։

Կարելի էր լռութեամբ և արհամարհանքով անցնել դրանց վրայից՝ իբրև բոլորովին անման այդպիսի ոչ պատաբեր գործողութեան մէջ, սակայն՝ որպէս մէկը յիշեալ քահանաներից՝ թէ անձնական պատիւս պաշպանելու, թէ ճշմարտութեանը մասամբ ծառայելու և թէ մանաւանդ ընթերցող հասարակութեան և իմ հեռաւոր ընկեր-բարեկամների և ծանօթների կասկածանքներն ու թիւրիմացութիւնները միանգամայն փարատելու համար՝ պարտք եմ համարում—առանց մանրամասնութեան մէջ մտնելու յօդուածի զանազան կէտերին պատասխանելու նպատակով—յայտնել ի գիտութիւն ամենքի, որ ես իմ ձեռնադրված օրից (1900 թ.) մինչև այսօր՝ պակներից և ննջեցեալներից ստացած եկեղեցու «լուսագին» և էջմիածնի «հոգեբաժին» կոչված նուէրները անկորուստ յանձնել եմ ըստ պատկանելոյն, նախապէս արձանագրելով եկեղեցու լուսագինը եկեղեցու ժապաւենեալ մատեանում, հոգեբաժինը յանձնելով հոգ. կառավարութեանը և ստանալով պատշաճաւոր կտրոններ նուիրաբերողների անուամբ։ Ի դէպ, պէտք է այստեղ առանձին գոհունակութեամբ արձանագրել, որ Կարսի հայ ժողովուրդը մի տեսակ սրբազան պարտականութիւն է համարում լուսագին և հոգեբաժին նուէրները ուրախութեամբ տալու, միշտ էլ տալիս է՝ երբ քահանան յիշեցնում է նրան. հէնց երբեմն էլ ինքն է առաջարկում քահանային ստանալու իր ննջեցեալի «հոգեբաժինը»։

Ուստի, ով որ ցանկանում է իմ վերև ասածների ճշմարտութեանը վերահասու լինել, խնդրում եմ՝ շնորհ բերել ծանօթանալու յիշեալ լուս. և հոգեբաժնի մատեանների հետ՝ չափաբերական մատեանների հետ համեմատելով, որոնք գտնվում են Կարսի հոգ. կառավարութեան և Աստուածածին եկեղեցու մէջ. եթէ՝ բացի վկայութեամբ ստուգված մի քանի աղքատներից՝ դուրս եկաւ, որ ինքս որևէ մէկից՝ նոյնիսկ մի կօպէկ այդ անունով ստացել ու իւրացրել իմ այն, առանց սակայն մատեան անցկացնելու, այդ դէպքում պարտաւորվում եմ նրա հնգապատիկը վճարելու և յետայսմ՝ իմ իշխանութեան ալեն իրաւամբ դատվելու իբրև եկեղեցու և էջմիածնի հասոյթները իւրացնող։

Բայց և այնպէս չեմ կարող իմ զայրոյթն ու արհամարհանքը չը յայտնել յօդուածագիր Ծխականին, որ փոխանակ քաղաքացիական քաջութիւն ունենալու և բացարձակ կերպով գրելու իսկական իւրացողների դէմ—եթէ կան այդպիսիները—անարեխղճաբար թացն ու չորը միմեանց է խառնել «աւազակներ» կամ «աւազակութիւն անողներ» վիրաւորական բառերով և մոլորութեան մէջ գցել ընթերցող հասարակութեանը՝ առանց խնայելու լրագրութեան սուղ էջերը՝ ժողովրդին մտաւոր սնունդ մատակարարող պիտանի գիտելիքների համար։ Կարսի ս. Աստուածածին եկ.

միաբան՝ Կորիւն ք. Քոթանջեան

ԿԱՐԾԻՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Վեհափառ Կաթողիկոսի հաճութեամբ կազմվել է ժամանակաւոր ուսումնական խորհուրդ, որի անդամներն են՝ Մեսրոպ վարդ. մագիստրոս, Յուսիկ վարդ., Գարեգին և Երուանդ վարդ., ինչպէս նաև Մատթէոս, որը հրաժարվել է և որի տեղի նկատի ունին Ներսէս վարդապետին։

Խորհուրդը գործելու է մինչև սեպտեմբեր, իսկ սեպտեմբերին ճեմարանի ուսուցչական խումբը կընտրի իր միջից որոշ անձերի, որոնք մտնելով վերոյիշեալ խմբի մէջ կազմելու են մշական ուսումնական խորհուրդ։

Ահա ըստ էութեան մի ծանրակշիռ խնդիր՝ դրված հրապարակի վրա, որ արժանի է առանձին ուշադրութեան և որ իր այժմէական բնոյթով անմիջապէս կապված է ժողովրդի մտաւոր ու տնտեսական կեանքի և սրանցից բղխող դիրեկտիվների հետ։ Հէնց այդ տեսակէտից էլ պարտք ենք համարում փոքր ինչ ծանրանալ այդ խնդրի վրա, որպէսզի հասարակութեան համար պարզ լինի, թէ ինչ է ուսումնական խորհուրդը, ովքեր են լինելու այդ խորհրդի անդամները և թէ՝ որպիսի ծանր ու պատասխանատու դեր են ստանձնելու վերջիններս։

Այս խնդրի վերաբերմամբ մենք կասէինք հետևեալը, ի նկատի ունենալով նրա իրական կազմը,—որ այդպիսի բարձր ինստանցիա, ինչպիսին ուսումնական խորհուրդն է լինելու, պէտք է կազմվի ընտրական սիստեմով ժողովրդի, կամ աւելի ճիշդ՝ կրթական հաստատութիւններում երկար ու ձիգ տարիներ կեանք մաղող ուսուցչական ներկայացուցիչների կողմից. այդ դէպքում անպայման, հրապարակ կը գային անհատներ, որոնք ապրելով բուն ժողովրդի ծոցում՝ գիտակ կը լինէին վերջնիս հոգեկան ու կենսական պահանջներին և՝ որպէս այդպիսիք՝ իրանց հեղինակաւոր ձայնը կունենային կրթական ցաւատանջ ու վիրաւոր խնդրում։

Ով ապրել է ժողովրդական խաւերում և անձամբ շօշափել նրա տարիների բարդացած վէրքերն ու պալարները, միայն նա կարող է բուժիչ միջոցներ առաջարկել. ով տարիներ շարունակ կեանք է մաշել մեր ծխական դպրոցներում, նա կարող է իմանալ նրա կարիքներն ու պահանջները, որոնք անմիջական առնչութիւն ունեն տեղական ու էտնոգրաֆիական պայմանների հետ։ Մինչդեռ վանական փափկասուն միաբաններին այդ աշխարհն իր բոլոր կողմերով անծանօթ է և խորթ. հետևապէս վերջիններս անկարող են կազմել այն ինստանցիան, որ գոհացում տար ծխական դպրոցներում սովորող ու դաստիարակվող մատաղ սերնդին։

Մամուլի մէջ քանիցս արծարծվել է թեմական խորհրդի հարցը, սակայն միշտ էլ մնացել է՝ «ձայն բարբառոյ յանապատի»։

Լաւ է ուշ, քան երբէք։ Այժմ, երբ հրապարակի վրա է դրված արդէն ուսումնական խորհրդի հարցը և գրեթէ լուծումն է ստացել էջմիածնի պարիսպներում, կառաջարկէինք հայ հասարակութեան գիտակից անհատներին, մանաւանդ գաւառական ուսուցիչներին, հանդէս գալ և առաջադրել վերոյիշեալ բարձր ինստանցիայի համար կօմպիտենտ ու ձեռնհաս անհատներ, որոնք մեր իրականութեան մէջ որոշ դիրք են գրաւում տարիների փորձառութեամբ և մանկավարժական պատրաստութեամբ։

Մեր առաջ դրված է ամբողջ ռուսահայոց մատաղ սերնդի կրթութեան ու դաստիարակութեան նօրմալ ու բնական առաջխաղացութեան կենսական հարցը, որի լուծումը կախված է ժողովրդի կողմից ընտրված՝ ձեռնհաս ու կարող անհատներից։ Թող հրապարակ գայ գիտակից տարրը և կրթական գործին կանոնաւոր տոն ու ընթացք տուող անհատներ առաջարկէ։

Եթէ կը լինեն առարկողներ, թէ ուշ է և դպրոցական պարապմունքներն սկսվելու են շուտով, մենք այդպիսիներին կասենք, որ լաւ է ուշ, բայց հիմնաւոր սկսված գործը, քան թէ շտապված, բայց անհիմն սկսված։ Թող առաջիկայ ուսումնական տարում դպրոցներն իրանց պարապմունքները շարունակեն այն ձևով, ինչ ձևով եղել է դպրոցների վերաբացումից յետոյ մինչև 1909 թ.։ Իսկ 1910 թ.-ի մայիսին նշանակել Թիֆլիսում համագումար, որին կը մասնակցեն ժողովրդի, ինչպէս նաև բոլոր թեմական և ծխական դպրոցների ներկայացուցիչները. սրանք համագումար կը գան իրանց առաջարկվելիք նիւթերի և խնդիրների, ինչպէս նաև դպրոցների, տեղական առանձնայատուկ պայմանների համառօտ տեղեկագրերով։

Համագումարում ընդհանուր բնոյթ կրող խնդիրների մասին կը լինեն խօսակցութիւններ և առաջարկութիւններ, մինչև որ կը պարզվեն և կը լուսաբանվեն այդ խնդիրները. ապա համագումար եկող ներկայացուցիչները կընտրեն երեք կամ աւելի տարով ուսումնական խորհուրդ, որ բաղկացած կը լինի թւական այն քանակից, որպիսին պահանջում է գործը։ Այդ բոլորից յետոյ ուսումնական խորհրդին կը յանձնվին վերև յիշված տեղեկագրերը, որոնցից խորհուրդը կը հանէր ընդհանուր տուեալներ և ըստ այմի՝ կը մշակէր այն ծրագիրը, որ բաւարարութիւն կը տար բոլոր ծխական դպրոցների պահանջներին՝ թէկուզ մինիմալ չափով։

Այդ դէպքում միայն գործը կանոնաւոր ընթացք կը ստանար և դպրոցները ազատ կը լինէին որոշ թերութիւններից։ Donner

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌ. ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 օգոստոսի

ՍԱՐԱՏՕՎ։ Հրդեհ ծագեց երկաթուղային ապրանքային կայարանում։ Այրվեցին 2 պակհաուզներ և 10 վագոն ցորենով։ Վնասները մօտ 45000 ռուբլի են։

Ստարի Ասլաշում հրդեհն ոչնչացրել է 90 գիւղացիական խրճիթ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժամանեց Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան։

ԿՈՒՐԱԿ։ Բօլսուվոյ գիւղում հրդեհը ոչնչացրեց 45 գիւղական խրճիթ գոյքով և հացով։ Վնասը 20,000 ռուբլուց անցնում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆէրգանի շրջանը, Զարժոյ, Սամարկանդ, Տաշկենտ քաղաքները և միջին-ասիական երկաթուղագծի շրջանը, բացառութեամբ Անդրկասպեան շրջանի սահմանների, յայտարարվում են ուժեղացված պահպանութեան գրութեան մէջ մի տարով փոխարէն արտակարգի։

Ուժեղացված պահնորդական գրութիւնը երկարվում է մի տարով ևս Թուրքեստանի մի քանի տեղերում։

ԵԱՐՕՍԼԱՒԼ։ Կոստրօմա եկաւ ներքին գործերի մինիստրի օգնական Լիկոշինը։ Նրա նախագահութեամբ տեղի ունեցան մի քանի խորհրդակցութիւններ հողային բարեկարգութեան հարցի մասին։ Մինիստրը վաղը ուղևորվելու է գաւառը։

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ։ Մանիչէնի ցեխարուժարանում սէգոնը փակվեց։

ՏՈՒԼԱ։ Փակվեց անտառատէրերի 11-րդ համառուսական համագումարը։

ԼԻԲԱՎԱ։ Անգլիական «Կօրիվալ» նաւը մեկնեց Բէվէյ։

ԲՕՊՇԱ։ Բարձրագոյն ներկայութեամբ Գատչինայի շրջակայքում սկսվեցին մեծ զօրախաղերը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսերէն-Պանսիոն
ՅՈՎՍԷՓ
Մեղիք-Զհանեանցի

Тифлисъ. Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ եւ երեքեակ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։

(օ. մ.) 604. 20—15

Հայոց լեզուն տիրապետող

Օրիորդ

տնային վարժուհու ցենզով և լաւ Մոսկվայի Մանկավարժական Կուրսերում. ցանկանում է դասեր ունենալ հայոց դպրոցներում՝ թւաբանութեան և բնագիտութեան առարկաներից։ Պայմանների մասին դիմել տ. Թամարա Կաճկաճեանին հետևեալ հասցէով. Москва, Бронная, Б. Казихинскій пер. д. Ельчинскаго, кв. № 23.

(չ.տ.) 776. 2—1

Ի՞նչ բան է Շէվիոտ Կոլումբր

Ցամարդկանց հագուստի համար կտորեղէնների շրջանում եղած նորութիւնը «Շէվիոտ Կոլումբ» կտորն է։ Այնպիսի մի էժան գնով՝ այն է 5 ր. 25 կ., լաւ տեսակինը 6 ր. 25 կ. տղամարդկանց ամբողջ կօստիումի համար, 4¼ արշ., կտորը ոչնչով չէ գանազանվում արշինը 5—6 ռուբ. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ գերազանց ամրութիւն, գործնականութիւն և շքեղութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ողորկ-ձիթագոյն կամ թէ նոյն գոյները՝ բծերով։ Ուղարկվում է պոստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու։ Առանց բիսկի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ Въ фабрику шерстяныхъ издѣлій

ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ гор. Лодзь № 15 Э.

(В. 29642) 388. 1—1

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ

Հիմնված 1890 թ. ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նարէրեժնայա փող., Վերայի. կամուրջի մօտ

Յատուկ առևտրական ուսումնարան երկու սեռի անձանց համար, 15 տարեկանից ոչ պակաս։ Դասարանները պատրաստում են հաշապահի, թղթակցի, գործակալի և այլն պաշտօններ վարելու կառավարչական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններում։ ՕՐԻՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ։ ԴԱՍԱՒԱՆԴՈՂՆԵՐԻ ԼԱՒ ԿԱԶՄ։ 19 տարվայ ընթացքում աւարտել են հազարաւոր երիտասարդներ, որոնք այժմ վարում են պատասխանատու պաշտօններ։ Մանրամասնութիւնները ձրիաբար տրվող ծրագիրներում։ Խնդիրների ընդունելութիւնը սկսված է։ Պարապմունքները սեպտեմբերի 15-ից։ Գրասենեակը բաց է ամեն օր։ (օ. մ.) 667. 20—13

Մօդային, գործնական, սիրուն

Ստուգված են միայն պատնոտ ունեցող մեր «ԳԵԿԱԴԱՆՍ» ժամացոյցները։ Ժամացոյցի կօրպուսը ամենատափակն է, մետալից, հին արծաթի նման, զարդարված գանազան նկարներով (նայիր նկարը). ընթացքը քարերով, լարումը առանց բանալիի 40 ժամը մի անգամ։ Երբէք չեն կորցնում իրանց սկզբնական տեսքը։ 12 ր. փոխարէն միայն 3 ր. 50 կ., իսկ 2 հատը 6 ր. 50 կօպէկով։ Կանանց նոյնպիսի ժամացոյցներ 4 ր. 50 կօպէկով։ ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է.—Բերել տուէք միայն «ԳԵԿԱԴԱՆՍ» ժամացոյցը և դուք միշտ շնորհակալ կը մնաք մեզանից։ Ուղարկում եմ մինչև բօպէլները ստուգված՝ ժամացոյցները վերադիր վճարով և առանց կանխավճարի, երաշխաւորելով ժամացոյցի ընթացքի ճշդութիւնը 6 տարով, իսկ մետաղի ամրութիւնը՝ 25 տարով։ Մինչև 4 հատի առաքումը 40 կ. (Սիրիր 75 կ.)։ Նոր ոսկէ շղթաներ բրէլօկով 75 կ. և 1 ր. 50 կ. հատը, երկմետալ շղթան 2 ր. 50 կ. և 3 ր. 50

Հասցէն՝ И. Штрумфелдъ, Варшава. Св. Креста № 43. Отдѣл. 23.

(28. օգ. 12, 21) (В. 44160) 693. 3—1

II Առևտրական 8-դասեան դպրոց

Թիֆլիսում առևտրական գիտութիւններ տարածող ընկերութեան ձեռքով բացվում է այս տարվայ սեպտեմբերի 1-ից։

Խնդրագրերի ընդունելութիւնը մինչև օգոստոսի 25-ը։

Քննութիւնները օգոստոսի 31-ին։

Առանց քննութեան ընդունվում են վկայականների մրցութեամբ 1-ին դաս. տարրական դպրոցներն աւարտածները, իսկ 4-րդ դաս. քաղաք. 4-դասեան դպրոցներն աւարտածները։

Տարեկան վճարն է 80 ռուբլի։

Ժամանակաւոր հասցէն՝ Тумановская ул. д. № 13 Торговая школа Теръ-Степанова.

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.